

355.51
4-35

7 MAR 2010

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ

355.51

Կ-35

Ք Ա Ղ Դ Ա Ս Ա Գ Ի Ր Ք

ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Գ Լ Ո Ւ Ե IV

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆ
ՆՈՒՔՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧЕДЕНИЯ
Ленинских Наук
СССР

ՊԵՏՂՐԱՏ

1932

ՌԱԶՄ. ՂՐԱՏ. ԲԱԺԻՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

355.51
Կ-35

346



ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԳ

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ

ԳԱԼԻԲ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՌԱՆՁՆԱՎԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

«Ծավալվող համաշխարհային տնտեսական նգնածամբ, սպառման շուկաների համար իմպերիալիստական պետությունների մղած պայքարի հետևանքով, խորացնում է բոլոր իմպերիալիստական հակասությունները, տալով նրանց առանձնահատուկ սրություն:

Ավելացել է իմպերիալիստական պետությունների միջև գինված կոնֆլիկտների վտանգը: Սակայն իմպերիալիստների շահերի հակասությունների աճումը չի քուլացնում, այլ, ընդհակառակը, սրում է ԽՍՀՄ դեմ իներվենցիան պատերազմի վտանգը»:

Այսպես ասաց իր վերջնականում կոմիտեերնի Գործկոմի 11-րդ պլենումը 1931 թվի ապրիլին:

Մահաշտեյի յեն հակասությունները խոչոր կապիտալիստական պետությունների միջև, սակայն ԽՍՀՄ դեմ գինված հարձակման նրանք պատրաստվում են մեծազույն ակտիվությամբ:

«Ա՛նհ անգամ, յերբ կապիտալիստական հակասությունները սրվել են սկսում, բարձուագիտան իր հայացքներն ուղղում է ԽՍՀՄ կողմը. չի՞ կարելի արդոյ՞ կապիտալիզմի այս կամ այն հակասությունը (կամ բոլոր հակասությունները միասին վերցրած) լուծել ի հաշիվ ԽՍՀՄ» (ՍՏԱԼԻՆ):

Ահա թե ինչու կապիտալիստական յերկրները կատաղորեն պատրաստվում են վոչ միայն իրար դեմ պատերազմելու, այլ պատրաստվում են առաաջին հերթին պատերազմելու Խորհրդային Միության դեմ:

Իմպերիալիստների պատերազմը Խորհրդային Միության դեմ կլինի բուրժուադեյի հակահեղափոխական իմպերիալիստական պատերազմ պրոլետարիատի դեմ: Կապիտալիստական աշխարհը պատերազմ է սկսում մեր դեմ, վորպեսզի տապալի պրոլետարական դեկտատուրան,

զրկել ինքնազգային Միութեան բանվորներին ու գյուղացիներին Հոկտեմբերյան հեղափոխութեան նվաճումներից և ե՛լ ավելի սուրկացնել իր յերկրներում բանվոր դասակարգին ու աշխատավոր մասսաներին: Գալիք պատերազմը, վոր պատրաստում են իմպերիալիստները մեր դեմ, կլինի այն բոլոր ուժերի ու ամեն տեսակ զենքերի անխնայ ու անհաշտ բռնամարտը, վորը մեր դեմ կարող է հանել բուրժուազիան և այն բոլոր ուժերի ու զենքի միջև, վորը կհանեն սոցիալիզմի յերկրի պաշտպանութեան համար վտարի յեղած աշխատավորները:

Լենինը նախագագաւացոււմ էր, — վոր մենք չպետք է մոռանանք վոչ մի բոպե, վոր պատերազմը կարող է ծագել հանկարծակիութիւն:

Մեր խնդիրն է՝ յուրաքանչյուր բոպե պատրաստ լինել սոցիալիստական շինարարութեան զինված պաշտպանութեան համար: Ինչպիսի՞ք են մարտիկի խնդիրները գալիք մարտերում: Այս հարցին պատասխանելու համար ամենից առաջ հարկավոր է վորոշել, թե վորոնք են ժամանակակից պատերազմի առանձնահատկութիւնները, ինչի պետք է պատրաստվի բանակը, վորը զինված պայքար է մղելու:

ԻՆՉՊԻՍԻՆ ԿԼԻՆԻ ԳԱՆԻԲ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Վերջին դարի բոլոր պատերազմներն ել իրենց զենքով խտրով տարբերվում են միմյանցից: Կապիտալիստական տեխնիկայի աճումը առաջացրեց սպառազինումների քանակի ու վորակի աճում, իսկ այդ փոխեց նաև կովի տակտիկան: Ներկայումս մարտական տեխնիկայի գարգացումը հասել է բարձր չափերի, բայց նա դեռ չարունակում է կատարելագործվել: Ժամանակակից մարտի դաշտում սկսում է լայնորեն դործել մոտորը, գործերը հազեցվում են ավտոմատիկ զինքով, բուսակի առանձին ստորաբաժանումները մեքենայացվում են: Այդ հնարավորութիւնն է տալիս արագ գրավելու մեծ տարածութիւններ և զարգացնելու հսկայական կրակային ուժ: Այդ բոլորն ստիպում են ժամանակակից բանակներին անընդհատ կատարելագործելու իրենց տակտիկան, կովի իրենց յեղանակները:

Գալիք պատերազմը կպահանջի առաջին իսկ որից կովող պետութեան բոլոր ուժերի մեծագույն լարում: Ճակատը կարիք կղաք միլիոնավոր արկերի, միլիարդավոր փամփուշտների, տասնյակ հազարավոր սավառնակների, հարյուր հազարավոր ավտոմոբիլների, միլիոնավոր տոնն յերկաթլարի, հազարավոր տանկերի, հրանոթների, զնդացրերի... Հրացանների, գանտղան ապարատների, մեքենաների, գործիքների... Ճակատը կպահանջի որական հարյուրավոր վազոն կենսամթերք, խար, հանդերձանք ու հազուտեղեն: Իսկ ինչպիսի՞ք կլինեն թիկունքի, մանավանդ արդյունաբերութեան, տրանսպորտի, բանվորական ուժի պահանջները: 1914—1918 թ. թ. համաշխարհային պա-

տերազմի վերջում Յեվրոպայի ամբողջ մետաղաձուլական արդյունաբերութիւնը և ամերիկական արդյունաբերութեան 3/4 աշխատում էին պատերազմի համար: Թե ինչպիսիք են ժամանակակից մարտի ծախքերը, կարելի չէ դատել հետեյալ որինակներով. հաշվված է, վոր համաշխարհային պատերազմում սպանված մեկ զինվորին «ընկնում էր» ամենապակասը 300 արձակված արկ: Գերմանիայում համաշխարհային պատերազմի ընթացքում պատրաստված է 47 հազար սավառնակ և 97 հազար մոտոր, Ֆրանսիայում՝ 51 հազար սավառնակ և 93 հազար մոտոր:

Գալիք պատերազմն առաջին իսկ որերից իր թափով կանցնի համաշխարհային պատերազմից: Դատելու համար, թե ինչպիսին կլինի այդ թափը, հիշենք, թե ինչով վերջացավ առաջին համաշխարհային պատերազմը:

«1919 թվին, — գրում է Անդրեայի հայտնի պնդածակատ հետադիմական Չերչիլը, — հազարավոր սավառնակներ պետք է ավերելին Գերմանիայի քաղաքները, տասնյակ հազարավոր հրանոթներ պետք է ջախջախելին ճակատը: Տեսնված էլին բոլոր պատրաստութիւնները, վորպեսզի ամեն որ ավտոներով փոխադրվեն 30 կիլոմետրի վրա քառորդ միլիոն զինվոր: Թունալոր գազերը պետք է վոչնչացնելին ամեն տեսակ զիմազրութիւն, կյանքի վորեւէ հնարավորութիւն: Այն մտադրութիւնները, վոր մշակվել էլին 1919 թվի հարձակման համար, ներկայումս չարունակվում են դարգացնել յուրաքանչյուր բանակում, և յեթե պատերազմ ծագել, այդ պատերազմը կմղվի ավելի հուժկու զենքով, քան յենթադրվում էր այն ժամանակ»:

Ձոն Բակիլը, — ամերիկական հետազոտողը, — ավելի անկեղծորին է պատմում 1919 թվի չկայացած ուլերացիաների պատրաստութիւնների մասին.

«Իաշնակիցները դեռ չէին կարողացել գործադրել, բայց ուժեղ կերպով պատրաստում էին հարձակման համար վիթխարի ուժերի ներհրեչալոր ուժի անբոտումբերով: Փորձեր էլին կատարվում առանց ողաջունների սավառնակներով: Իաշնակիցները կատուցում էին հազարավոր նոր սավառնակներ, պատրաստվելով ամբողջ Գերմանիայում ցանկ մահ ու ավերած: Նրանք մշակել էին նոր գազեր... գերմանական հրամատարութիւնն իր հերթին արշավ էր պատրաստում Փաիդի դեմ վիթխարի քանակով վառվող բուսածնով (Փոսֆոր): Այդ եսկազրիլիայի յետեից պետք է թուշելին այլ եսկազրիլիաներ ծանր ուումբերով, վորոնք հեշտութեամբ կենսավելին ջահի պես վառվող քաղաքը: Հաջորդ առաջադրանքն էր քաղաքի վրա թունավոր գազերով ուումբեր: Այս բոլոր նախագծերը վո՛չ մոռացել են, վո՛չ էլ կորց-



61399-84

բել: Նրանք հանված են պահարաններից, տեսակավորված և ուսումնասիրված են: 1919 թվի կամպանիան չկիրառվեց, սակայն նրա իրենաները քայլում են առջևից»:

ՊԱՏԵՐԱԶՍԸ ԿԼԻՆԻ ՍԵՔԵՆԱՅՈՑՎԱԾ ՈՒ ԿՊԱՅԱՆՁԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԲԱՆԱԿՆԵՐ

Ժամանակակից պատերազմի պատրաստութան կարևորագույն հարցը մարդկային ուժերի պատրաստութան հարցն է: Թվով ինչպիսի բանակներ դուրս կդնան զայիք պատերազմի դաշտերը: Այդ հարցը դրված է վոչ պատահական ձևով: Բուրժուազիան վախենում է ստեղծել մասսայական, բազմամիլիոն բանակ: Բուրժուական ու ուղմական դործիչների մեջ հանդես են յեկել այնպիսիները, վորոնք մտածում են յուր զնալ առատորեն մեքենաներով ու ավտոմատներով հայթայթված փոքրիկ բանակներով: «Մարդկային մասսան նյութական ճակատամարտում արդեն վոչինչ է: Դեռ ավելին, նա «չարիք է», — ասում է այդպիսի դործիչներից մեկը, Գ. Չոյլզանը: «Ճակատամարտերում մարդը խոչընդոտ է հանդիսանում թե՛ Ֆիզիկական և թե՛ հոգեբանական տեսակետից» — ասում է մի ուրիշը, Ֆուլբերը: Բուրժուազիան ուզում է կառուցել այնպիսի բանակ, վորը չենթարկվի դասակարգային անհաղթահարելի հակասություններին, վորը կուրորեն մարտի զնա կապիտալիստների շահերի համար:

ԻՆՉՈՒՆ ՅԵ ԲՈՒՐՇՈՒԱԶԻԱՆ ԿԱՍԵՆՈՒՄ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԲԱՆԱԿՆԵՐԻՑ

Չոյլզանն ու Ֆուլբերը, ինչպես նաև կապիտալիստական բանակների մի քանի այլ դործիչներ՝ Լիդել Գարտը, Բերներ Սոյուարտոր ուզում են ստեղծել վոչ մեծ, մեքենայացված բանակ տանկերով, տանկետակներով, զրահապատ մեքենաներով: Նրանք կարծում են, վոր զայիք զինված բռնամարտի բախտը կլուծեն այն մարտիկները, վորոնք զինված են զնդացրերով ու հրանոթներով, նստած են արագ շարժվող մեքենաների վրա, պաշտպանված են զրահով: Նրանք կարծում են, վոր այդպիսի՝ արագաշարժ, ուժեղ, հուժկու, բայց փոքրաթիվ, բանակի համար նրանք կկարողանան «հավատարիմ» մարդկանց կազմել ջուրիկ: Փաշիստական բանակ՝ տանկերի վրա նստած, — ահա այն բանակը, վորն ամենից ցանկալի յե բուրժուազիային:

«Յեթե մենք Հնդկաստանում ունենանք մեքենայացված բանակ, բացարձակորեն ասում է գեներալ Բերներ Սոյուարտոր, — ապա այլևս հարկ չի լինի վախենալու բնիկների ապստամբություններից: Տանկերը կհնչեն յուրաքանչյուր ապստամբություն

հեշտությամբ, արագ, վստահորեն ու հարմար ձևով: Պատժիչ արշավախմբերը դործը կտեսնեն համարյա պատժողների կողմից առանց մարդկային զոհերի: Հրամատարությունը համարձակ ու վճռականապես կուղղվի ապստամբության բուն կենտրոնը և միանգամից կհասցնի հարկավոր հարվածը»:

Փոխարինել մարդուն մեքենայով, — ահա թե ինչ կուղենար բուրժուազիան: Յեվ պատահական չե այդ պատճառով, վոր կապիտալիստական աշխարհում այնչափ ձգտում են զարգայնել ողային պատերազմի դադարիաները:

Արդեն իսկ համաշխարհային առաջին պատերազմում լայն դործադրվում էր ավիացիան: 1918 թվին, որինակ՝ դերմանացիները յերկրորդ անգամ Մարնայի վրա հարձակվելու ժամանակ 60 կիլոմետր ճակատի վրա կենտրոնացրել էին մինչև հազար սավառնակ: Ավիացիայի բարձր նվաճումներով արեցած իմպերիալիստական պատերազմից հետո կապիտալիստական բանակների մի քանի ուղմական մասնագետներ այն տեղը հասան, վոր սկսեցին պնդել, թե ողային նավատորմն է լուծելու «աշխարհի բախտը»:

«Բանակներն ու նավատորմները, — ասում է գեներալ Միտչեր, ՀԱՄՆ ողային նավատորմի նախկին զորահրամատարը, — հարկավոր է գետեղել վոչոտ թանգարանի ապակե վանդակների մեջ... Այդ հարգո, ծերացած ծառաներին չի կարելի վստահել ազգային պաշտպանությունը: — Միայն սավառնակն է ազգի դատավորը:

Գայիք պատերազմում ավիացիան դործադրվելու յե էլ ավելի լայն չափով, քան 1914—1918 թ. թ. պատերազմում: Իտալական այժմ մեռած գեներալ Դուեն այսպես է նկարագրում իր հայացքները զայիք ողային պատերազմի մասին.

«Կուսիտ, բայց անվիճելի փաստը, վորը պետք է համակի մեր ամբողջ գիտակցությունը և ցնցի այն, այսպիսին է. — ամենաուժեղ բանակը... ամենաուժեղ ծովային նավատորմը ողային տեխնիկայի ժամանակակից դրությամբ դործնապես իրական փոչինչ չեյին կարող առնել, խանդարելու համար պատշաճ ձևով պատրաստված հակառակորդին ավերելու, յեթե այդ կամեցավ հակառակորդը, յուրաքանչյուրը մեր հարյուր քաղաքներից»:

Ժամանակակից ավիացիոն ջոկատը բաղկացած 10 սավառնակից, վորոնք 2-ական տոնն ուռմբ են վերցնում, կարող է մի արշավում նետել 20 ուռմբ, վորը հավասար է անդլիական 3 ուղմանավի համապարկին: Հաղար հատ այդպիսի սավառնակից բաղկացած ողային նավատորմը, վորն ավելի չարժե արժեքով, քան մի մեծ ծովային ուղմանավ, կարող է մի հարձակման ժամանակ ավելի ուռմբ նետել, քան արձակում է ամբողջ անդլիական նավատորմը իր բոլոր հրանոթներով կրակելով 10 անգամ: Հենց այս հաշիվն արդեն վկայում է, թե վորչափ

մեծ է ուղային նավատորմի դերը ժամանակակից պատերազմում: Սակայն կարծել, թե միայն ուղային նավատորմն ի վիճակի յե լուծելու պատերազմի յեղքը, նույնչափ սխալ է, վարչափ յերագել այն մասին, թե գալիք գիևված բուսամարտը կարող է լուծել փոքրիկ մեքենայացրված բանակը:

Չնայած տանկերի, ավիացիայի և տեխնիկական այլ միջոցները վիթխարի մարտական նշանակություն, դալիք պատերազմը, հակառակ բուրժուազիայի թեորեաններին, չի կարող յոլա գնալ առանց բազմաթիվ, բազմամիլիոն բանակների»: Բանից դուրս և գալիս, որինտի՛ վոր 50 դործող տանկերի թիկունքը պահանջում է սպասարկման համար չափալանց շատ ոժանդակ մեքենաներ: Այդ ոժանդակ մեքենաները կարիք ունեն մեքենավարների ու պաշտպանների: Բացի դրանից, մեծ կորուստների հետևանքով, վորը տեխնիկական կրում է մարտադաշտում, բանակները միշտ ել ստիպված են պահելու տեխնիկական հաղեղման մեծ պաշարներ: 1918 թվի ողոստոսի 8-ին, այսպես կոչված՝ «Գերմանիայի սև որը», դերմանական բանակի դեմ բաց ելին թողել 300 տանկ: Մինչդեռ 12 որից հետո շարքում մնացել եր ընդամենը 6 տանկ, մնացածը կործանվել էլին: 1916 թվին պատերազմի 4 ամսվա ընթացքում գերմանական ավիացիան կորցրեց 3 հազար սավառնակից ավիլի, իսկ 1918 թվին, վորպեսզի շարքում լինի առնվազն 3 հազար սավառնակ, Գերմանիան ստիպված յեղավ ճակատին տալու 13 հազար սավառնակ: Յուրաքանչյուր բանակ պետք է պատրաստ լինի արագ և անընդհատ լրացնելու իր մարտական տեխնիկան, իսկ դրա համար պետք է ունենալ վոչ միայն մեքենաների մեծ պաշար, այլև այդ մեքենաներն սպասարկող մարտիկները մեծ պահեստ:

Տանկը և յուրաքանչյուր զրահապատ մեքենա շարժվում է արագ և դրա հետ միասին վոչնչացնում է թշնամու կենդանի ուժն ու տեխնիկան: Հենց վոր զրահապատ մեքենան ու տանկը կանգ են առնում, նրանք շուտով անողնան և դառնում: Նրանց «մարտական կյանքի» ամբողջ հաջողությունը շարժման մեջ է: Նրանք անընդունակ չեն ամբարջնելու իրենց մասնակի տաղական հաջողությունները: Այնտեղ, վորտեղից անցելին տանկերը, պետք է թողնել վորոշ ուժեր: Այսպիսի ուժեր տալիս է մարտիկները հիմնական մասսան, այն է՝ հետևակը:

Այս բոլորը վկայում են այն մասին, վոր գալիք պատերազմում բանակները կլինեն մասսայական, —բազմամիլիոն:

Կոմիստերնի գործկոմի պլենումը դեռ 1927 թվին նշեց, վոր գալիք բանակները բազմամարդ կլինեն հատկապես հենց տեխնիկայի աճման պատճառով:

«Գալիք պատերազմը, դա մեքենայացված պատերազմ է, —ասում է պլենումը, —յուրաքանչյուր յերկիր կվերածվի կոտորածի միջոցների մի վիթխարի գործարանի: Մեքենայացրված սպանության գործում

մոտորին կպատկանի վնասկան տեղ: Բայց հենց հատկապես այն պատմառով, վոր տեխնիկան հասել է զարգացման բարձրագույն աստիճանի, կապիտալիստական պետութուններն ստիպված կլինեն՝ ռազմական գործադրութունների ռաշակները նետելու ամենավիթխարի մասսաներ»:

Կապիտալիստները, չնայած վորքիկ ընտիր բանակներ ստեղծելու իրենց ցանկություն, ստիպված են գալիք պատերազմի համար պատրաստելու բազմաքանակ կաղեր: ՀԱՄՆ 1918 թվին ունեյին 2 միլիոնանոց բանակ, 5 հազար հրանոթ, 300 տանկ, 2 հազար սավառնակ, 40 հազար ավտոմոբիլ: Ազդային պաշտպանություն մասին 1920 թվին ընդունած դեկրետով գալիք պատերազմը ՀԱՄՆ կսկսեն մի բանակով, վորը կունենա 3½ միլիոն մարդ, 15 հազար հրանոթ, 6 հազար տանկ, 5 հազար սավառնակ և 200 հազար ավտոմոբիլ: Մեր արևմտյան հարեւանները, —Լեհաստանը, Ռուսիան, Ֆինլանդիան, Եստոնիան ու Լատվիան, —խաղաղ ժամանակ ունեն մոտ 600 հազար զինվոր և 5 միլիոն վարժեցված պահեստը, իսկ համաշխարհային պատերազմից առաջ իմպերիալիստական ամենազլխավոր հինգ պետություններն ունեյին պահեստում վոչ ավելի քան 8 միլիոն մարտիկ: Մեր հարեւանները յեթաղրում են պատերազմի դեմքում մորիլիզացիայի յենթարկել վոչ պակաս քան 120 հետևակային դիվիզիա, 54 հազար ձեռքի ու հաստոցավոր զնդացրերով, 9 հազար հրանոթով, մինչդեռ Գերմանիան 1915 թվին պատերազմի մեջ մտավ միայն 95 դիվիզիայով, վորոնք ունեյին 1800 զնդացիր և մոտ 5 հազար հրանոթ: Հինգ ամենազլխավոր իմպերիալիստական պետություններն արդեն իսկ ներկայումս ունեն ավելի քան 20 միլիոն վարժեցված մարտիկ: Ոպերացիաների յեղքը ճակատամարտերի դաշտերում լուծելու յե մարդը:

Պատրաստելով միլիոնավոր մարտիկներ գալիք ծավալուն բանակները համար, բուրժուազիան արդեն իսկ ներկայումս ձգտում է պատրաստելու իրեն համար հավատարիմ կաղեր, վորոնց վրա նա կարողանար հենվել հեղափոխական բանվորների ու զյուլացիների դեմ մղած պայքարում, այնպիսի կաղեր, վորոնք ունեն նրան անցկացնելու մորիլիզացիան և բացաղատելու բանակները: Ներկայումս արդեն իսկ Յրանիայում համախմբված է վոչ պակաս քան 500 հազար Ֆաշիստ դանադան կիսառազմական կազմակերպություններում: Փաշիստական կազմակերպություններում Անգլիան ունի ավելի քան 300 հազար հողի, ՀԱՄՆ 1½ միլիոն հողի, Իտալիան մի միլիոնից ավելի, Գերմանիան 800 հազար հողի, Լեհաստանը մի միլիոնից ավելի, Ռուսիան 156 հազար հողի: Այս բոլոր կազմակերպությունները պահվում են կառավարական միջոցներով: Բուրժուական ռազմական մասնազետները յերբեմն չափազանց անկեղծորեն են խոսում այդ կազմակերպությունների խնդիրների մասին: Ահա թե ինչ է դրում, որինտի՛ լեհական զնդապետ միովեցկին:

«...Յուրաքանչյուր պետութեան համար հեղափոխական ջրն-
ցումները սպառնալիքն ամենակրիտիկական մոմենտին, այսինքն՝
մոբիլիզացիայի մոմենտին, ստիպում է շոկելու զբաղի ուժեր՝
ապահովելու համար ներքին կարգը մոբիլիզացիայի մոմենտին
և ռազմական գործողութիւններն սկսելու բոլորին: Սմենից
հավանական է, վոր այդ նպատակները համար կենդրոնացվին հա-
տուկ զորամասեր վառ արտահայտված դասակարգային բնույ-
թով, որինակ՝ Իտալիայում—Փաշխտները, Գերմանիայում
—դանազան ազգայնական կազմակերպութիւններ և այլն: Այդ
կիսառազմական մասերը կամ կազմակերպութիւնները կարելի
կլինի ոգտազործել մոբիլիզացիան ավարտելուց հետո հետագա
զորամասերի կազմակերպման համար, նրանց ներքին զոդումն
ու բարոյական արժեքը նրանց կտա մեծ նշանակութիւն»:

ԳԱՏԵՐԱԶՍԸ ԿԴԱՎԱՆԶԻ ԱՄԲՈՂ ԵՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԻՅԵՄԱՐԻ ԼԵՐՈՒՄ

Գալիք պատերազմի թափը, նրա վիթխարի ծախքերը, վորոնք
փորձվելու յեն ռազմական տեխնիկայի լայն գործադրութեամբ, կազ-
հանջեն կովող պետութեան ամբողջ տնտեսութեան վիթխարի լարում՝
ճակատը սնելու և պահելու համար: Արդեն վերելում ասված է, թե
վորչափ մեծ են ճակատում մարտական տեխնիկայի կորուստները:
Այդ տեխնիկան հարկ կլինի վերանորոգել ու բազմապատկել: Հարկա-
վող է հոգ տանել վոչ միայն ռազմական տեսակետից վարժեցված
մարդկանց լայն կազրեր ստեղծելու մասին, այլև պատրաստելու ամ-
բողջ տնտեսութիւնը՝ բանակի համար սպառազինում հանդերձանք
ու պարեն մատակարարելուն:

Արդեն իսկ նախընթաց իմպերիալիստական պատերազմում գին-
ված ճակատի պահանջները բոլոր նախորդ պատերազմների համեմա-
տութեամբ անչափ աճել էին: Հենց միայն 1916 թվին ռուսական բա-
նակը 17 անգամ ավելի արկ է ծախսել, քան ամբողջ ռուս-ճապոնական
պատերազմի ընթացքում: Յրանսիան պատերազմն սկսեց ունենալով
ընդամենը 5.100 զնդացիք միայն: Պատերազմի ընթացքում նրա ար-
դյունաբերութիւնը ճակատ հասցրեց 95 հազար զնդացիք: Բացի դրա-
նից, ճակատի կարիքների համար Սնդլիայում դնված էր 18 հազար
զնդացիք: Սոմմեյի վրա տեղի ունեցած մարտում զերմանական բա-
նակն որական ծախսում էր մեկ միլիոն արկից ավելի: Արկերի արտա-
դրութիւնն Սնդլիայում 1915—1916 թ. թ. աճել է 34 անգամ, այն-
տեղ կառուցվել է արկերի 92 նոր գործարան: Հաշվված է, վոր ժա-
մանակակից կորպուսն մի որվա մարտի ընթացքում ծախսում է մոտ
100 միլիոն մարտապաշար: 1914—1918 թ. թ. պատերազմի սկզբում

զերմանացիք ունեյին 40 սուլանալ: պատերազմի ընթացքում նրանք
կառուցեցին մոտ 400 սուլանալ: Այս բոլոր թվերը վկայում են այն
մասին, թե վորչափ մեծ են ծախքերը ժամանակակից պատերազմում:
Կովող պետութեան տնտեսութիւնը պետք է պատրաստ լինի ճակա-
տին տալու վիթխարի չափերով մարտական մեքենաներ, մարտական
պաշար, մարտի ու զորքերի հայթայթման դանազան միջոցներ:

Պարզ է, վոր կովող յեկրների արդյունաբերութիւնը պետք է վա-
ղորք պատրաստված լինի այդպիսի լարված աշխատանքի: Տասնյակ
մասնադիտական կոմիտեներ աշխատում են ՀԱՄՆ մեջ, պատրաստելով
ամերիկական արդյունաբերութիւնը պատերազմի համար: Արդյունա-
բերութիւնը պատերազմի ժամանակվա աշխատանքների պատրաստող
նույնպիսի պետական կազմակերպութիւններ գոյութիւն ունեն և այլ
պետութիւններում: Ըստ վորում հատուկ ուշադրութիւն է նվիրվում
մետաղաձուլական արդյունաբերութեանը: Մետաղը մարտական մեքե-
նաների ու մարտապաշարների հիմնական նյութն է: Այն մա-
սին, թե ինչ չափով մետաղ է ծախսվում, կարելի չէ դատել թե-
կուղ հենց նրանից, վոր նախընթաց իմպերիալիստական պատերազմում
ծախսված էր 800 միլիոն արկ, իսկ պատերազմի յուրաքանչյուր
որում ծախսվում էր միլիոն հաշվով 30 միլիոն փամփուշտ: Միայն
Գերմանիան պատերազմի յուրաքանչյուր սրում ծախսում էր արկերի
համար 150 հազար տոնն պողպատ, 2 հազար տոնն պղինձ, 4 հազար
տոնն կապար (արճիճ): Սանճի (Յառա) ու փողակների համար յուրա-
քանչյուր ամիս գործադրվում են հազար տոնն ալյումին, յերկու հազար
100 տոնն պղինձ, 2 հազար 900 տոնն ցինկ: Ռուսաստանը 1913 թվին
գործադրում էր 38 հազար տոնն պղինձ, իսկ պատերազմի յեկրորդ
տարում՝ 78 հազար տոնն:

Յեկրոպայի համարյա ամբողջ մետաղագործական արդյունաբերու-
թիւնը (90 տոկոսով) աշխատում էր պատերազմի համար: Տեքստիլ
և կաշու արդյունաբերութիւնն իրենց արտադրանքի 70 տոկոսը տա-
լիս էին ճակատի կարիքների համար:

Ճակատի վիթխարի վորկրամոլութիւնը հարկադրում էր ընդար-
ձակել հին արտադրութիւնը և պատերազմի կարիքները բավարարելու
համար հիմնել նոր արտադրութիւն: Իսկ այդ արդյունաբերութիւնը
հատուկ պատրաստութիւն է պահանջում, այսպես կոչված պահանջում
է նրա մոբիլիզացիոն պատրաստականութիւնը: Չեռնարկութիւններն
ւտանում են հատուկ մոբիլիզացիոն առաջադրութիւններ: Կատարվում
են փորձնական մոբիլիզացիաներ, վորոնք ցույց են տալիս, թե վորքան
տնտեսութեան այս կամ այն ճյուղը պատրաստ է ռազմական արտա-
դրութեան համար: 1925 թ. Միացյալ Նահանգներում կատարվեց փորձ-
նական մոբիլիզացիա, վորին մասնակցում էր մոտ 17 միլիոն մարդ:
Ռադիական իշխանութիւնը վորոչ որ հարստեց 123 մասնաւոր գոր-

ծարձններին պատերազմի պայմանական սկզբի մասին: Այդ գործա-
բանները դադարեցրին իրենց սովորական արտադրութիւնը և սկսեցին
արտադրել մորիլիզացիոն պլաններով նախորդ կազմած մարտամթերք-
ներ, մոտորներ և կովի այլ միջոցներ: Այդ փորձնական մորիլիզացիոն
վերջացնելուց հետո Միացյալ Նահանգների ռազմական մինիստրը
հայտարարեց.

«Պլանները դեռևս վոչ բոլորովին են պատրաստ, բայց մենք
արդեն բանակի մատակարարման համար կարող ենք շարժման
մեջ դնել 4 միլիոն մարդուց բաղկացած մի ապարատ, և ավելի
լավ, ավելի արագ և ավելի աժան, քան 1918 թվին: 75 միլիոն
հրետանական արկերի մասսայական արտադրութեան պատրաստ-
ման ժամկետները կրճատվեցին 23-ից մինչև 13 ամսով:
Հակազգրերի պատրաստութեան ժամկետները կրճատվել են 13
ամսով, նույնը ավիացիայում և մյուս բնագավառներում»:

Պատերազմի ժամանակ աշխատանքը լարված կլինի նաև տրանս-
պորտի բոլոր տեսակներում: Ժամանակակից բանակների սպերացիա-
ները համարյա ամբողջութեամբ կախված կլինեն տրանսպորտի տեղա-
փոխունակութունից: Բավական է հիշել, վոր 1914 թ. Ֆրանսիական
բանակը կենտրոնացնելու համար պահանջվում էր որակյալ առնվազն
հազար եշեր: Միջանի հանդուցային կայարաններում գալիս անցնում
էին մինչև 200 գնացք մի որում, այսինքն՝ մի շնացքից ավելի յուրու-
քանչյուր 8 բոպեյում: Տրանսպորտը կտեղափոխի գործեր, մարտա-
մթերք, պարեն, խար ու մարդկային համալրումներ: Թե վորքան ան-
ընդհատ ու անխափան կաշխատի տրանսպորտը, դրանից կախված կլի-
նի ժամանակակից բանակի ճակատի անուցանումն ու լրացումը: Լոճի
սպերացիայի ժամանակ Գերմանիան 1914 թ. ուղևորական բանակին հար-
ված հասցնելու համար տեղափոխեց ամբողջ մի շարք զինվորականներ
800 եշերներով, և այդ հանգամանքը վճռեց սպերացիայի բախտը:
Քաղաքացիական պատերազմի փորձից մենք դիտենք, թե ինչպես էր
ոգնում տրանսպորտը մեր գործողութիւններին սպիտակ-գլխաբերական
բանակների դեմ, գործեր տեղափոխելով մեզ համար ամենակարևոր
ուղղութիւնների վրա:

Ժամանակակից մարտադաշտում խոշոր զարգացում է ստացել
ավտոմոբիլը: 1914—18 թ. թ. պատերազմի ընթացքում Ֆրանսիացի-
ները ավտոմոբիլներով տեղափոխել են մոտ 30 միլիոն մարդ և 31 միլ-
տոնն բեռ: Հայտնի յե մի դեպք, յերբ մի շարքում ավտոմոբիլներով
տեղափոխել են ավելի քան 45 հրետանական գործասեր: Սակայն անց-
յալ պատերազմում գործերի տեղափոխութիւնը ավտոմոբիլով համե-
մատաբար հազվադէպ էր: Ավտոտրանսպորտի գլխավոր մասսան
բեռներ էր տեղափոխում: Այսպես՝ 1918 թ. Ֆրանսիական 92 հազար
մեքենաներ, մթերք են մատակարարել 50 զինվորականներին: Ապագա

պատերազմում լայնորեն կգործադրվի ավտոմոբիլներով գործերի տե-
ղափոխումը: Արդեն այժմ հատկապես կազմակերպվում են մոտորաց-
ված գործեր:

Ապագա պատերազմի պայմաններում պակաս լարված չի լինի պա-
տերազմող պետութիւնների անտեսութեան նաև մյուս ճյուղերի աշ-
խատանքը: Պատերազմի համար պետք է պատրաստել անտեսութեան
բոլոր ճյուղերը: Այդ պատրաստութեան մեջ կարևոր տեղ է բռնում
բանվորական ուժի հարցը:

Յեթե բուրժուազիան վախենում է իր գործերի կայունութեանից և
մարտունակութեանից, ապա նա քիչ չի անհանգստանում նաև իր թի-
կունքի կայունութեան մասին: Դասակարգային պայքարի սրումը և հե-
ղափոխական շարժման ալիքի հսկա վերելքը հարկադրում են բուրժու-
ազիային հենց այժմյանից ձևաք առնել հատուկ միջոցներ, վորպեսզի
պատերազմի ժամանակ արագորեն կարողանա ձեռնել բանվոր դասակար-
գի և աշխատավոր մասսաների կողմից ամենչ տեսակ հեղափոխական
յեղույթ: Այդ ատճառով հենց այժմյանից մի շարք կապիտալիստական
պետութիւններում ընդունված են հատուկ որոնքներ: Այսպես որի-
նակ՝ Անգլիայում փաստորեն վերացված է բանվոր դասակարգի գոր-
ծադուլ հայտարարելու իրավունքը: Յուրաքանչյուր գործադուլ, նույն-
յակ խաղաղ ժամանակ, կարող է կառավարութեան կողմից հայտարար-
վել ազդրինի: Իտալիայում լայնորեն կազմակերպվում են առանձին
ֆաշիստական արհմիութիւններ, վորն իրականում նշանակում է միան-
րամյն վերացել և աշխատավոր մասսաների դասակարգային ինքնու-
րոյն կազմակերպութիւնը: Ֆրանսիայում արդեն ընդունվել է սոցիալ-
ֆաշիստ Պոլ-Բոնկուրի հորինած «զինված ազդի» մասին որոնքը: Այդ
որոնքի ելուցիւնն այն է, վոր ամբողջ բնակչութիւնը, առանց հասա-
կի և սեռի խտրութեան, պատերազմ հայտարարելուց հետո համարվում
է մորթարեցվում են զինվորներին: Յապոնիայում տաժանակիր որոնք է
մտցրած բանվորների գործադուլները դեմ պատերազմի ժամանակ: Ար-
գենն այժմս Լեհաստանում համաճարակի բնույթ ունի արյունալի տե-
րորը բնիւրուաների և մյուս ձեռքված ազգային փոքրամասնութիւնների
նկատմամբ: Այդ նույն միջոցներով իր «թիկունքն» է ամրացնում նաև
Ռուսիին: Այս բոլոր միջոցներն ուղղակի հետևանք են խորհրդային
միութեան դեմ պատերազմի պատրաստութեան:

ՏԵՆՆԻԿԱՆ ՓՈՒՍՈՒՄ Ե ԶՈՐԲԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Տեխնիկայի ծավալուն գործադրումը ժամանակակից պատերազ-
մում անասելի ընդլայնում է պատերազմական գործողութիւնների թա-

վր: Այժմ պետութեան թիկունքը վոչ մի դեպքում իրեն անվտանգ համարել չի կարող: Թիկունքին կապառնան և՛ վիթխարի սավառնակներ—ոմբակները, և՛ դիրիժաբլները—ողային նավերը, վորոնք 100 և ավելի մարդ են բարձրացնում, և՛ մեքենայացված ջոկատները, վորոնք որական միջանի հարյուր կիլոմետր են անցնում: Այսպէս պատերազմում նշանավոր չափով լայնորեն կսկսեն գործադրել զերհեռահար հրետանին, վորը գործում է տասնյակ և նույնիսկ հարյուրավոր և ավելի կիլոմետրի վրա: Արդեն անցյալ իմպերիալիստական պատերազմում փորձարկվեցին սավառնակներ, վորոնք թռչում էին առանց սավառնորդի: Ամեն մի պատերազմող պետութեան թիկունքն այժմ կարող է յենթարկվել սավառնակների հարձակմանը, վորոնց վրա վոչ մի մարդ չի լինի, բայց վորոնք իրենց վրա կիրեն տոններով պայթուցիկ նյութեր: Ձնըված է ցակատի ու քիլուսի միջև սահմանագիծը: Թիկունքն իր լայնած աշխատանքով ոճանդակում է ճակատին, իսկ ճակատն առանց թիկունքի է վիճակի չէ ժամանակակից պատերազմը վարել: Թիկունքը միշտ պատրաստ պետք է լինի կազմակերպելու սրտայտանությունը և վորոնցանցն յայս կամ այն կերպ ներխուժած հակառակորդին:

Ռազմական տեխնիկայի ընդարձակ զարգացման պատճառով փոխվում է նաև ռազմական տակտիկան, այսինքն՝ զորքերի գործողութեան յեղանակները: Որինակ՝ տակտիկայի փոփոխման վրա խոշոր չափով ազդել է կրակի հզոր աճումը:

1913 թ. ամերիկական դիվիզիան մի բրայեյում կարող էր արձակել 12 հազար զնդակ: Այժմ նա, արձակում է կես միլիոն զնդակ մի բրայեյում: 1914 թ. Ֆրանսիական զնդի հրացանա-զնդացրային կրակը կազմում էր 32 հազար ձիգ մի բրայեյում: Այժմ այդ գունդը տարի է 75 հազար ձիգ: Մինչև համաշխարհային պատերազմը Ֆրանսիան ուներ 1-300 զնդացի, Անգլիան՝ 900, Մե՛ 1-300: Ներկայումս արդեն Ֆրանսիան ունի 35 հազար զնդացի, Անգլիան՝ 12 հազար, Ամերիկան 26 զար: Հնարավոր է նոր զնդացիներ և ավտոմատ հրացաններ: Այս բոլորն ուժեղացում են ժամանակակից ճակատի կրակի խտությունը: Այսպէս պատերազմում մի կիլոմետր ճակատի վրա կաշխատեն առնվազն 50 զնդացի. այսինքն՝ մի մետր ճակատի վրա կարելի է ուղղել մոտ 13 զնդակ մի բրայեյում:

Արագորեն առաջ է ընթանում նաև հրետանին: Կապիտալիստական բոլոր բանակներում բարձրացել է հրետանու արագաձգությունը և հեռահարությունը: Պատրաստվում են նոր տեսակի հրետանիներ. որինակ՝ հակատանկային և զենիթային: Դեռևս իմպերիալիստական պատերազմում Գերմանիան կիրառում էր զերհեռահար հրաձգություն, ոմբակոծելով Փարիզը 21—24 միլիոնտրանոց հրանոթներով 110 կիլոմ. հեռավորութեան վրա: Այդ հրանոթի արկը քաշում էր 120 կիլոգրամ

և թռչում էր մոտ 3 բրայեյ: Գերմանացիներն այդ հրանոթներով ընդամենը 300 ձիգ կատարեցին: Ահա թե ինչ է պատմում Փարիզի ոմբակոծման տեսանկյան անդրազանց սպան:

«1918 թ. մարտի 23—ին 7ժ. 13 բրայեյին Փարիզի բնակչությունը հուզված էր ինչ վոր արկի պայթուցից, վորն ընկել էր Սենա գետի ափին: Պայթուցն այնպես ուժեղ էր, վոր կարելի էր լսել ձայնը համարյա ամբողջ Փարիզում: 15 բրայեյից հետո լավեց յերկրորդ պայթուցը՝ նույնպիսի ուժով: Բնակչությունը կարծում էր, վոր արկերն ընկնում են նոր տիպի սավառնակներից այնպիսի բարձրությունից, վոր յեկրից նրանք չեն յերեվում: Պայթուցները շարունակվեցին ամբողջ առավոտ ճիշտ 15 բրայեյ ընդմիջումներով: Մետրոպոլիտենը (ստորերկրյա ճանապարհը) մառամբ դադարեց գործելուց, և ժողովրդի հսկայական ամբոխը հավաքվեց փողոցներում նայելով յերկնքին, աշխատելով նկատել յենթադրելի սավառնակները, վորոնք ուժեր են նետում: Հավանական էր թվում և մյուս յենթադրությունը՝ թե արկերը նետվում են հրանոթներով, վոր թաղնված են Փարիզի մոտ: Սակայն չուտով, բեկորների հետազոտությունից հետո պարզվեց, թե բանն ինչու՞ն է: Վորքան առաջին մոմենտին բարոյական ազդեցությունը մեծ էր, այնքան էլ մի քանի օրից հետո այդ ոմբակոծումը շատ քիչ մարդու յեր հուզում: Յուրաքանչյուր ոմբակոծում մի օրվա մեջ տալիս էր 20 մարդ սպանված և 50 վիրավոր, կատարելով աննշան ավերում»:

Հետևակի և հրետանու կրակային հզորությունը լրացվում է շարժվող մարտական մեքենաներով—տանկերով և զրահակիրներով: Ժամանակակից բոլոր բանակների զրահութեքը նույնպես ուժգնորեն զարգանում են: Յեթե համաշխարհային պատերազմին տանկերն ընթանում էին մի ժամում 6—8 կիլոմ. արագությամբ և կարող էին գործել միջանի տանյակ կիլոմետր հեռավորութեան վրա, մինչդեռ այժմ տանկի արագութեանցությունը հասնում է մինչև 20—30 և ավելի կիլոմետրի մի ժամում, իսկ գործողութեան շառավիղն ավելանում է 300 կիլոմ.:

Մարտադաշտի կրակով հագեցվածությունը հարկադրում է հետևյալին մասնատել իր մարտակարգերը: Չորական ստորաբաժանումներն արդեն չեն կարող առաջ շարժվել շղթաներով, ինչպես նրանք առաջ էին շարժվում անցյալ պատերազմի սկզբին: Շղթան արագորեն կարող է զնդակոծվել ավտոմատիկ զենքի հասարակ ցրումով: Ժամանակակից հետևակն անցել է իմբակային տակտիկային: Այդ տակտիկայի յեյությունն այն է, վոր զորքերի ամենախոշոր ստորաբաժանումները մարտադաշտում բաժան-բաժան են լինում առանձին գործող միավորների: Մարտիկները չեն հավասարվում վորևէ շղթայի, այլ ցվրվում են փոքր յերամներով և իմբակներով, կատարելով ընդհանուր խնդիրը,

վոր առաջադրվում է նրանց: Յուրաքանչյուր մարտիկ ձգտում է լա-
վագույն կերպով հարմարվել տեղանքին, վորպեսզի լավ սգտադործի-
կը դենքն ու անխոցելի մնա հակառակորդի համար: Առանձին ստորա-
բաժանումները ձգտում են իրարից այնպիսի հեռավորութան վրա յի-
նել, վորպեսզի միևնույն արկի պայթույնը չհարվածի նրանց:

Չորքերը ժամանակակից մարտադաշտում մասնատվում են վոչ մի-
այն ճակատով (լայնութամբ), այլև խորութամբ: Հարձակման ժա-
մանակ հետևակը կշարժվի ալիք-ալիքի յետևից, շարան շարանի յետ-
ևից: Պաշտպանութան ժամանակ հետևակը խրամատներ կիօրը և մե-
կը կմտնի և կկառուցի ամեն տեսակ կառուցվածքներ՝ ինչպես որինակ
մեքենայացված ճարտարագիտական զորքերի, քիմիական զորքերի և
մյուսների ոգնութամբ: Պաշտպանվողները կաշխատեն ստեղծել հակա-
ռակորդի համար անմատչելի տարածութուններ, պատելով այդ տա-
րածութունները լարերով, թողնելով այնտեղ կայուն թունավոր նյու-
թեր, թաղելով ականներ տանկերի ու զրահակիրների դեմ, անտաննե-
րում կտորած ծառերով ճահճացնելով տեղանքը, փոսեր փորելով այն-
պես, վորպեսզի նրանցով չկարողանան անցնել տանկերը: Այս բոլոր
միջոցներն ու ամբությունները (կառուցվածքները) ծածկված կլինեն
կործանիչ, առաջուց կազմակերպված ղեկավարների ու հրետանու կրա-
կով:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԵԽՆԻԿԱՆ ԱՆԸՆԴՀԱՏ ԿԱՏԱՐԵԼԱԿՈՐԾՎՈՒՄ Ե

Ժամանակակից տեխնիկական անընդհատ ուժեղացում է ինչպես ժա-
մանակակից հետևակի հարձակողական ուժերը, այնպես էլ նրա ուժերը
պաշտպանութան ժամանակ: Հարուստ տեխնիկական միջոցներով
հագեցված հետևակին հաղթելու համար, այդ հետևակի հակառակոր-
դը—մյուս կողմի հետևակը—կձգտի գործադրել ե՛լ ավելի շատ
տեխնիկական միջոցներ և կովի նորագույն յեղանակներ: Հակառակոր-
դըն, ոգտազործելով հանկարծակիութունը, նոր ձևով կգործադրի հին
միջոցները, ճակատի կարևոր տեղամասերը կընտրի հսկայական մարդ-
կային ուժեր, տեխնիկական միջոցներ, ավիացիա, զրահուժեր: Այս
տեխնիկական միջոցները նույնպես անդադար կատարելազործում են,
ինչպես և հետևակի դեմ կովի նրանց յեղանակները (ձևերը): Բավա-
կան է մասնանշել, թե ինչպիսի մեծ հաջողությունների յե հասել ժա-
մանակակից ավիացիան: Հայտնի յեն դեպքեր, յերբ առանձին սավառ-
նակները արագությունը հասել է 600 կիլմ. մի ժամում, իսկ առանձին
սավառնակներ թռել են 7 և նույնիսկ 12 օր առանց իջնելու: Ավիացիան
վարժեցվում է աշխատելու մեծ բարձրությունների վրա, կառուցվում
են այնպիսի սավառնակներ, վորոնք բարձրացնում են մի քանի տաս-
նյակ ուղեորներ: Այդպիսի սավառնակները կարող են իջնիչ, ոգային

ղեկաններ—ղեկավաճ ջոկատներ, վորոնք կհարձակեն թիկունքից և
թիկունքի վրա:

Սոցիալիստական շինարարության հաջողությունները հնարավո-
րությամբ են տալիս հագեցնել կարմիր բանակը կովի ամեն տեսակ եւր
միջոցներով: Ավիացիայի ասպարիզում խորհրդային իշխանությունը
ձեռք է բերել նշանակալից հաջողություններ: Կարմիր բանակի սավառ-
նակ-կործանիչներն իրենց արագությամբ և վերջնական բարձրությամբ
յեա չեն մնում բուրժուական բանակների լավագույն կործանիչներից, և
միևնույն ժամանակ գերազանցում են նրանց նրանով, վոր կարող են ուղի
մեջ մնալ ավելի յերկար ժամանակ: Հետախուզական սավառնակների
մրցակցության ժամանակ Պարսկաստանում մեր հետախուզյն ավելի
լավ ցուցանիչներ տվեց, քան թե Ֆրանսիականը: Նա 3 բուլե շուտ
բարձրացավ 5 հազար մետր բարձրության վրա, և Ֆրանսիականից 40
կիլոմետրով ավելի յեր թռչում մի ժամում:

Ժամանակակից ճակատը հագեցվում է դանդաղ տեսակ մեքենա-
ներով, ապարատներով և գործիքներով: Բանակներում լայնորեն կգոր-
ծադրվեն ելեկտրականությունը: Դեռևս 1914—18 թ. թ. պատերազմին
դերմանական բանակն ուժեղ ելեկտրական հոսանք եր թողնում լարա-
փակոցների մեջ: Ելեկտրականությունը լուսավորում եր գորական ար-
հեստանոցները. նա ծավալուն գործադրություն գտավ հատուկ գոր-
ծիքներում, վորոնք ողնում են մարտը ղեկավարելուն, — կապի միջոց-
ներում. բանակները պատվում են հեռախոսային և հեռագրական լա-
րերի ցանցով: Միայն Եեֆֆերի բանակն ուներ (1914—1918 թ. թ. պա-
տերազմին) լարային կապ յերկարությամբ ավելի, քան յերկրագնդի
ընդհանուր շրջազիծը: Բոլոր բանակներում այժմ զարգանում է անթել
կապը. կատարելազործվում է լուսային նշանարագությունը. լավա-
նում են հողի միջով հեռագրելու ասպարատները. յայնորեն աճում է կա-
պը ռադիոյով: Գերմանական անցյալ պատերազմն սկսեց միքանի տաս-
նյակ ռադիո-կայաններով: Պատերազմի վերջին նրանց թիվը հաշվվում
եր հազարներով: Ռադիոն ընդարձակ գործադրություն ունի շարժվող
գործամասերի միջև, որինակ հետևակի և սավառնակի միջև, հրետանու
և ավիացիայի միջև, զրահատանկային ուժերում, ծովային և սղային
տորմիզում: Ժամանակակից ճակատում այժմ հնարավոր է հրետանա-
կան այնպիսի ուժեղ կրակ, վորը կվոչնչացնի ամեն տեսակ հեռախո-
սային ու հեռագրական լարեր: Այդպես եր արդեն իմպերիալիստական
պատերազմին: Այսպիսի դեպքերում նեղ գրությունից կազատի ռադիո-
կապը:

Դեռևս անցյալ պատերազմին գործադրվում եյին այնպիսի մար-
տական միջոցներ, վորոնք հեռավոր տարածության վրա ղեկավարվում
եյին ռադիոյով: Պատերազմի ժամանակ Գերմանիան նավակներ եր ու-
յարկում Ֆրանսիական նավահանգիստները առանց մարդկանց, բայց



61399-67

պարթուցիկ նյութերով: 1918 թ. առաջին անգամ թրապ ուսուցիչով դե-
կալարվող Փրանսիական սովետականները առանց ուղաչույցի: Հաջորդ առ-
բիններին առանց դեկալարների և վարողների շարժվում էին գրահա-
կիր նավեր, ավտոմոբիլներ և տանկեր: Այլ գյուղատր քանի գնում, դար-
դանում և և կասկած չկա, վոր ապագա մարտադաշտը կտեսնի ուղի-
ալիքներով դեկալարվող, առանց մարդկանց մեքենաներ:

Այժմ կատարելագործվում են անտեսանելի ճառագայթներով հե-
ռագրելու սպարատներ: Արդպիսի ճառագայթների ոգնութամբ կա-
րելի կլինի տեսնել գիշերը և մառախուղի մեջ: Տեխնիկայի այս բոլոր
նվաճումները կկիրառվեն ապագա պատերազմում:

Ժամանակակից պատերազմը վարելու համար դորքերը պետք է վոչ
միայն լավ տիրապետեն ամբողջ ժամանակակից տեխնիկային, այլ
սովորեն կուխը նրա հետ և հազվեղ նրանց: Դրա համար հարկավոր է
լավ իմանալ տեխնիկայի դեմ կուխի բոլոր ձևերը և կատարելագործել
տակառիկան: այսինքն՝ գործողութայն ձևերը (յեղանակները) ինչպես
տեխնիկայի հետ միասին, այնպես և տեխնիկայի դեմ:

Ապագա պատերազմում, նոր տեխնիկական միջոցների զարգացման
հետևանքով, կզարգանա և անդադար կկատարելագործվի նաև գործերի
տակտիկան: Միայն այն դորամասը կարող է հույս դնել մարտական
հաջողութայն վրա, վորը վոչ միայն հիանալի գիտե մարտական գոր-
ծողութայնների ժամանակակից յեղանակները, այլև կզննի այն բոլոր
նոր ձևերն ու միջոցները, վոր գործադրում է հակառակորդը, և իր նա-
խաձեռնութամբ կուխի մեջ կմտցնի մարտի նոր ձևեր:

**ՁԵՆՔԻ ԲՈԼՈՐ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՍՆԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ,
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՆՀԱՏ ՄԱՐՏԻԿԻ ԳԵՐԱԶԱՆՑ
ՊԱՏՐԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՅԵՐԱՇԽԻՔ ԵՆ**

Բանակի տեխնիկական միջոցների մեծամասնությունը սպասարկ-
վում է ամբողջ մարտական կուլեկտիվի կողմից: Գործող տանկն իր վրա
յե կրում աշխատող մարտական կուլեկտիվին— վարողին և մարտիկնե-
րին: Հաստոցավոր զնդացրի համբանքը, դա ամբողջ մարտական մի
կուլեկտիվ է: Ողաչուն և ղխողը, մարտկոցի մարտիկները, ծովային
նավի մարտիկները— սրանք բոլորը մարտական կուլեկտիվներ են:
Սրանց հանձնած տեխնիկան կարող է անմեթոմ գործել միայն այն
զեպքում, յեթե կուլեկտիվի բոլոր մարտիկները զերազանց պատրաստ-
ված են միասեղ աշխատանքի համար: Յուրաքանչյուր մարտիկ իր
գործը լավ պիտի սովորած լինի, վորպեսզի մարտկոցի, նավի և այլն
ամբողջ համբանքի աշխատանքում խախտման պատճառ չզատնա:
Այստեղից սլարդ է, թե ինչ դեր է կատարում մարտիկի անհատական
պատրաստությունը:

Ամեն մի մարտիկ կատարելապես պետք է պատրաստված լինի մար-
տադաշտում ինքնուրույն գործողութայնների համար: Նա պետք է
հանկանա թե ինչ նշանակում ունի ինքը ամբողջ ստորաբաժանման, ամ-
բողջ գործասի մղած կուխում: Նա լավ պետք է իմանա, թե ինչպես է
իրականացվում ստանձին մարտիկների համագործակցությունն իրար
միջև և առանձին ստորաբաժանումների և զորքերի սարքեր տեսակների
միջև: Յերբ հարձակում են դործում հրաձիգները, պետք է իմանան
ինչպես կրակով պաշտպանել իրենց զնդացրի առաջարժումը, ինչպես
հարձակվել, վորպեսզի զնդացրը հնարավորություն ունենա կրակելու
միջանցների (ինտերվալների) միջով: Հաստոցավոր զնդացրողները
պետք է կարողանան իրագործել համագործակցությունը հետևակի ու
հրետանու հետ, հրետավորները պետք է վարպետորեն սմանրակեն
հետևակին իրենց հուժկու կրակով: Տանկերը ոգնում են հետևակին
ճեղքել անցնելու հակառակորդի ամբացրած շերտերը և յետ մղել նրա
հարձակումը: Սակայն իրենք տանկերը հետևակի ոգնութայն կարիքն
ունեն, վորը վոչնչացնում է թշնամու հակատանկային միջոցները և ան-
գնաս է պահում իր տանկերը:

Լավ պատրաստված անհատ մարտիկները հնարավորություն կտան
ամբողջ մարտական կուլեկտիվին ուղտորեն կատարելու իրենց վրա դր-
ված խնդիրը:

Յուրաքանչյուր ստորաբաժանում, յուրաքանչյուր դորամաս և
զորքերի յուրաքանչյուր տեսակ ժամանակակից մարտում պետք է դոր-
ծի մյուս ստորաբաժանումների, դորամասերի և զորքերի տեսակների
հետ լիակատար համագործակցությամբ: Ժամանակակից մարտը— դա
համագորական մարտ է: Յեթե լավ չի դրված համագործակցությունը
հետևակի ու հրետանու միջև, հետևակի ու գրահուժերի միջև, Ավիա-
ցիայի ու հրետանու և զորքերի մյուս տեսակների միջև, ժամանակակից
մարտում չի կարելի հաջողություն հուսալ: Բանակի մարտական պատ-
րաստության կարևորագույն խնդիրն է հանդիսանում զորքերին համա-
ձայնեցված աշխատանքին վարժեցնելը, իրար միջև լիակատար փոխ-
համագործակցությունը, փոխադարձ հասկացողությունը, թե ինչպես
են գործում զորքերի մյուս տեսակը, ինչով պետք է նրան ոգնել և ինչով
նա կարող է ոգնել: Ահա թե ինչ է ասում այդ առթիվ Խաղմական ու
Ծովային գործերի ժողովրդական կոմիսարի տեղակալ ընկ. Տուխաչև-
սկիմ:

«Ինչո՞ւմ են ժամանակակից մարտի գլխավոր ատմանահատ-
կույունները: Իմպրիպիտական պատերազմից հետո չափա-
զանց ուժեղացել է հետևակի գնդացրերով սպառազինումը: Այդ
հանգամանքը կտրականապես բարձրացրել է հետևակի և բոլոր
գորական միավորությունների ընդունակությունը սլաշտպանու-
թյան համար: Այդ պատճառով հարձակումը նույնպես հետևա-

կից պահանջում է իր գնդացիների լավ ոգտագործումը և վարպետներին մանյուրելը գործերի մյուս տեսակների հետ միատեղ: Հետևակ գործառններին տրվում են վարձ նպատակներ հարձակման համար: Այդ նպատակներին հասնելու համար ընդհանուր զորական հրամատարն ու նրա շտաբը մշակում են հարձակման ու գրանի պլանը: Պլանը նախատեսում է մարտի ամբողջ բարդությունը և կազմակերպում է հարձակման դեկավարությունը տարբեր բնագծերում և խորությամբ: Ղեկավարվելով այդ պլանով, հրետանին իր կրակը վարում է այնպես, վարպետի հայտնի հակառակորդի պաշտպանողական շերտի գնդացիային հիմքը: Այդպիսով հրետանին հնարավորություն է տալիս հետևակին ժամանակին մեծացում կատարելու, և ապա հարձակում, պատրաստվել գրանի համար և գրանի հակառակորդի վրա: Տանկերը կոգնեն հաղթանարելու հակառակորդի արհեստական արգելիները, այլև հետագայում կոգնեն գրանին: Հետագայում հակառակորդի պաշտպանողական շերտը նրա ամբողջ խորությամբ մեղհել, անցնելու ժամանակ պետք է հետևակի, հրետանու և տանկերի համագործակցությունը լինի անընդհատ:

Այսպիսով դեպի հակառակորդը շարժվելու ժամանակ հարձակվող հետևակին ոգնում և նրա համար նախորդ պատրաստում են հաջողությունը գործերի մյուս տեսակները, առաջին հերթին հրետանին:

Այդպիսի ոգնություն է ցույց տալիս նաև հեծելազորը, յերբ նա ձիաքաղ է լինում:

Հրետանու ուժանդակությունն ավելի իրական լինելու համար և վարպետի համապատասխանի մարտի արագահոս զարգացումներ, հրետանին բաժանվում է հետևակին ոգնող խմբակների (ՀՈ): Այդ խմբակները ոգնություն են ցույց տալիս վարձ հետևակային գործառններին: Զորամասերի հրամատարներից նրանք ստանում են նաև մարտական խնդիրներ: Այդ դեպքում հետևակը ցույց է տալիս հրետանուն, թե վա՛ր նշանը նա պետք է ուժակոծի և ուր տեղափոխի կրակը հետագա առաջարժման ժամանակ: Նույնպես և հետևակը նշաններ է ցույց տալիս ՀՀՈ (հետևակի հեռավոր ոգնություն) տանկերին, վորոնք վա՛ր նշանում են գլխավորապես հակառակորդի հաստոցավոր գնդացիները, նաև նշաններ է ցույց տալիս ՀԱՈ-ին (հետևակի անմիջական ոգնություն տանկերին):

Մարտի զարգացման արագությունը կախված է հետևակի հարձակման արագությունից: այդ նշանակում է կախված է նրա համարձակությունից, նարակությունից և առանձին մարտիկների ձեռներեցությունից: Այդ արագությունը կախված է նույն-

պես գործերի մյուս տեսակների մարտիկների հմտությունից: որինակ՝ ընդունակությունից, ֆազությունից և հրետավորների ու հետևակի հետ կապի ջոկի կապավորների կայունությունից: Նրանք պետք է ժամանակին, անխափան մարտիկների փոխանցել հետևակային հրամատարների պահանջները: Գետակցների ժամանակ մարտի զարգացման հաջողությունն ու արագությունը կախված է վա՛ր միայն հետևակից, այլև սաայորներից և այլն:

Հետակը իր վրա յե կրում մարտի գլխավոր ծանրությունը: նա հաղթանարում է մեծամեծ դժվարություններ: դեմառդեմ հակառակորդի հետ, վարում է կրակային մարտ և սվինամարտ և ամրացնում է ձեռք բերած հաղթանակը: Այդ պատճառով հրետավորները, կապավորները, ֆիլիկները, սաայորները և մյուս մասնագետները պարտավոր են ամեն կերպ աջակցել հետևակին, թեթևացնել նրա մարտական աշխատանքի դժվարությունները, ոգնել նրան հաղթանակներ ձեռք բերելու նվազագույն կորուստներով:

ԱՅՍ ԲՈՂՈՐՆ ԱՍՈՒՄ ԵՆ ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՎՈՐ ԱՄԵՆ ՄԻ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ ՊԵՏԲ Ե ՀԱՍԿԱՆԱ ՏԱԿՏԻԿԱՆ (ՆՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՂԱՆԱԿ) ՎՈՉ ՄԻԱՅՆ ԶՈՐԲԵՐԻ ԻՐ ՏԵՍԱԿԻ ՏԱԿՏԻԿԱՆ, ԱՅԼԵՎ ՆՐԱՆՑ, ՎՈՐՈՒՅ ԻՐԵՆ ՈԳՆՈՒՄ ԵՆ, ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՆ, ՎՈՐՈՒՅ ՀԵՏ ՆԱ ԳՈՐԾՈՒՄ Ե ՄԻԱՏԵՂ»:

Կարմիր բանակի մարտիկն իր պատրաստութունն սկսելով անհատական ուսուցումից, աստիճանաբար անցնում է զորամասի և խոչըր միավորութունների կազմում ուսուցմանը: Կարմիր բանակի մարտական պատրաստության մեջ մեծ տեղ զբաղող տակտիկական ջոկատային ուսուցման ժամանակ մարտիկները գործնականում գործողութունների դպրոցն են անցնում ստորաբաժանումների և զորամասերի կազմում և ուսումնասիրում են ժամանակակից կռվի ձևերը զորքերի մյուս տեսակների հետ: այն է՝ հրետանու, զրահուժերի, ջիմիական զորքերի, ավիացիայի հետ և այլն: Տակտիկական այդ պարապմունքներում մարտիկը յարգանքներով պրակտիկայում բանակը հազեցնող տեխնիկան, ուսումնասիրում է այդ տեխնիկայի դեմ կռվի ձևերը: Այսպիսով տակտիկական պարապմունքը շարունակելով մարտիկի պատրաստութունը, միաժամանակ պատրաստում է զորամասերին և միավորութուններին (ամբողջութամբ վերցրած) և վարժեցնում է զորքերին միատեղ գործելու տեխնիկայով հազեցված խոչոր միավորութուններում:

Կարմիր բանակի յուրաքանչյուր մարտիկն իմանալով իմպերիալ խտանների պատերազմի համար պատրաստության մասին և առաջին հերթին խորհրդային Միության վրա հարձակվելու համար, պատրաստության մասին, պետք է հայտարարել իր ամբողջ յեռանդը անընդհատ

բարձրացնելու համար կարմիր բանակի մարտունակութիւնը: Մենք պարտավոր ենք ամեն կերպ ամրացնել սոցիալիզմ՝ կառուցող յերկրի պաշտպանութիւնը: Կարմիր բանակի տեսնական հզօրութիւնն ապահովող սոցիալիստական շինարարութեան հաջողութիւնների շնորհիվ, անշեղօրէն ամուսնացնում են մեր պետութեան ուժն ու ընդունակութիւնը պաշտպանութեան համար Համ Կ (բ) լենինյան դեկտեմբերյանը: Յարափանջուր մարտիկ բարձրացնում է ԲԳԿԻ հզօրութիւնը՝ համախմբելով կուսակցական կազմակերպութիւնների ու պետկազմի շուրջը, ձեռք բերելով քաղաքական գիտելիքներ և դասակարգային կոփվածութիւն, յուրացնելով ամրացող մարտական տեսնական և խնամելով այն, բարձրացնելով հրաձգային արվեստը, հրաձգային ու ֆիզիկական պատրաստութիւնը, ե՛լ ավելի ամրացնելով կարգապահութիւնը:

Մեր խնդիրն է՝ ամբողջ ուժերը գործադրել իմպերիալիստներին կործանելու հակահարված տալու պատրաստութեան համար, յի՞թե նրանք կհորձեն հարձակվել սոցիալիզմի յերկրի վրա:

«Մենք գործն այնպես պետք է դնենք, — ասաց ընկ. Վարաշելովը, — վարպետի առաջիկա պատերազմում հաղթանակ ձեռք բերենք «էիջ արյունով» և այդ պատերազմն անցկացնել այն յերկրների տերիտորիայում, վարն առաջինը գենի կարծրացնի մեր դեմ»:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կարմիր բանակը մի վճռական առավելութիւն ունի բոլոր կապիտալիստական բանակներին հանդէպ. այդ առավելութիւնը նրա բարձր դասակարգային գիտակցութիւնն է և մարտիկների ու պետկազմի համախմբվածութիւնը:

Լենինը կարմիր բանակին ուղղված իր գիտումն է մեջ ասում եր.

«Կարմիր բանակն անհաղթ է, վարպետն ևս համախմբել է միլիոնավոր աշխատավոր գյուղացիներին բանվորների հետ, վարունք սովորել են այժմ պայքարել, սովորել են ընկերական կարգապահութիւն, չեն վիստովում, կոփվում են վոչ մեծ պարտութիւններից հետո»:

Ռազմա-ծովային ժողովրդական կոմիտար ընկ. Վարաշելովը լիակատար իրավամբ հայտարարեց.

«Յեթե, համենայն դեպս, իմպերիալիստները մեր վրա հարձակվեն պատերազմ հայտարարելով, մենք կկռվենք մեզ հատուկ ամբողջ արիւթյամբ, 150 միլիոն ազատ ժողովրդի ամբողջ յստագուն ուժով: Մենք գիտենք, վար մեր կողմն է ամբողջ աշ-

խտաւոր մարդկութիւնը, մենք գիտենք, վար մենք կհաղթենք»:

Կարմիր բանակի ու աշխատավորների միջև անխզելի կապը պայծառ կերպով արտահայտվեց Չին-Արևելյան Յերկաթ-գծի վրա կոնֆլիկտի ժամանակ: Ամբողջ յերկրի աշխատավորները հողացողությամբ և ուշադրությամբ էյին շրջապատել Հեռավոր-Արևելյան բանակին: Բաղմաթիվ բանվորական պատգամավորութուններ Մոսկվայից, Ռյազանից, Վլադիմիրից, Չիտայից, Կուզբասից և մյուս վայրերից այցելեցին ՀԿՀԱ բանակին: Գիշ չեր նաև պատգամավորությունների թիվն աշխատավոր գյուղացիներից:

Բանվորները զորամասերի կյանքի, ուսուցման ու մարտական աշխատանքի հարցերին մոտենում էյին, վորպես իրենց հարցերին: Առանձնապես հասկանալի յեր Հեռ-Արևելյան բանակի մարտիկներին 42 մարզուց բաղկացած Լենինգրադի բանվորների ու բանվորուհիների այցելությունը, վորոնք խոշոր քաղաքական աշխատանք տարան զորամասերի մեջ: Լենինգրադցիները նախաձեռնողներ հանդիսացան Հեռավոր-Արևելյան բանակին Կարմիր դրոշի չքանչանով պարզեատրելու գործում: Այս բոլորը պահում էյին մարտական բարձր տրամադրություն ՀԿՀԱ բանակի զորամասերում:

«Ձեր արթուն պահպանությամբ մենք կատարում ենք մեր յերկրի ինդուստրացման հնգամյա պլանը, հաղթահարելով մեր շինարարության զգալարությունները, համառորեն և հաստատակամությամբ կատարում ենք արտադրական պլանը», —ասում էյին ամբողջ յերկրի պրոլետարները Հեռավոր-Արևելյան բանակի մարտիկներին:

«Արթուն կերպով պահպանեցեք սահմանները, իսկ մենք կկառուցենք սոցիալիստական գյուղ» — այսպես եր խորհատեսություններից, կոլտնտեսություններից ու գյուղի չքավոր-միջակային մասսաներից ստացված բոլոր նակագների, դիմումների ու նամակների բովանդակությունը:

Սպիտակ-չինական մի հարձակման ժամանակ հերոսական մահով ընկավ կարմիր բանակային զնդացրորդ ընկ. Գրիգորյանը, Նովոսիբիրյան մարզի գյուղացի: Այդ մասին իմացան նրա համագյուղացիները թերթերից: Ժողովում նրանք վորոչեցին ինդրել հրամատարությանը վորպեսզի Գրիգորյանի զնդացիները հանձնեն նրա համագյուղացի կարմիր բանակային Նիկիտ Ստարոստինին: Իսկ նրանք նամակ գրեցին նրան այդ մասին, վորն այսպես եր վերջանում.

— «Դու, Նիկիտա, չխայտառակես մեզ, արդարացրու մեր վատահությունը»:

Մանջուրիայի տակ մի կովից հետո աջ ձեռքից վիրավոր կարմիր

բանակայինը ինդրեց ընկերոջն աջ գրպանից հանել նամակը և կարդալ նրա համար: Այդ նամակում հայրը գրում եր.

— «Թանգազին Կոլյա! Յեթե դու հրացանդ ձեռքիդ դեպի մարտ գնալու լինես, ապա գնա առանց վախի: Իմ հրամանն է քեզ—պաշտպանիր Միությունը: Յեթե պետք է—մեռիր, բայց մեռիր վորպես ազնիվ մարտիկ, առանց հրացանը ձեռքից թողնելու: Հիշի՛ր, վոր քո պապը ճորտ է յեղել և ստանում եր որական է կոպեկ ոտձիկ»:

ՃԱԿԱՏԻ ԿԱՊԸ ԱՇԽԱՏԱՎՈՐ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Թիկունքի ու ճակատամերձ շերտի աշխատավորների ու ճակատի միջև կապի նշանակութունն առանձնապես մեծ է ապագա պատերազմում: Ճակատի անընդհատ, անդադրում սնումը մարդկային համալրումներով, զենքով, պարենով, հանդերձանքով և այլն—թիկունքի, ամբողջ յերկրի աշխատավորների կենսական ինդրին է:

Դրա հետ միասին հարձակման ողա-քիմիական միջոցների աճումը, ժամանակակից բանակների մոտորիզացիան և մեխանիզացիան մարտական գործողության մեջ են քաշում բնակչության հսկայական մասսաներին: Այդ նախ և առաջ վերաբերում է սահմանամերձ շերտի—սնմիջապես պատերազմական գործողություններով բռնված ուսյունների բնակչությանը: Պատերազմական գործողությունների շերտում գտնվելով, աշխատավորները յեթեակա յեն դանազան վատնողների: Դրա հետ միասին նրանց վրա յե դրվում Կարմիր բանակի զորամասերին անմիջական ուղնություն ցույց տալու մի շարք կարևոր պարտականություններ, ինչպես մարտական ինդրներ կատարելու ժամանակ (սայապաններ, առաջնորդ լինել, խրամատային աշխատանքներ և այլն), այնպես և թիկունքի ամրացնելու և պահպանելու նկատմամբ (հակաողային դիտողություն, կապի լարերի, կամուրջների, ճանապարհների և այլն պահպանություն և այլն): Հատկապես սահմանամերձ շերտում ամենից ավելի յակտիվ է լինում դասակարգային թշնամին, վորն իր հույսը դնում է թշնամական բանակի կողմից իրեն «իջկելու» վրա, վորին նա ուզում է: Այստեղ շատ ավելի անխզելի և միաժամանակ վտանգալից է կապը դասակարգային թշնամու ու հակառակորդի միջև, նրա աղետների, այն էլ յրտեսների ու սպիտակ-բանդիտների հետ: Վորքան մոտ ճակատին, այնչտեսների ու սպիտակ-բանդիտների հետ: Վորքան մոտ ճակատին, այնչտեսների—դասակարգային թշնամիների կողմից տարածվող սուտը իՍՀՄ-ի, Կարմիր բանակի մասին:

Այսպիսով՝ ճակատամերձ շերտում հատկապես սերտ կերպով են հյուսվում վոր միայն ընդհանուր-դասակարգային, այլև Կարմիր բա-

նակի ու աշխատավոր բնակչութեան անմիջական ամենօրեայ շահերը: Այստեղ կարմիր բանակն ու աշխատավոր բնակչութեանը կարիք ունենալու փոխադարձ ոգնութեան:

Յուրաքանչյուր կարմիր բանակային, յուրաքանչյուր մարտիկ, վոր ձախառնում է գտնվում, կարող է և պետք է այդ կապի ու բնակչութեան հետ փոխ գործողութեան անմիջական մասնակցին ու կազմակերպչին լինի՝ իրենց պետերի և կոմունիստական բջիջների ղեկավարութեամբ: Տեսնենք թե ինչո՞ւմ պետք է արտահայտվի այդ կոնկրետ ձևով:

ԿԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ ԿՈՓՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՐԻՆԱԿ ՏԱԼ

Չորամասի ու կարմիր բանակայինի վարք ու բարքով դատում են ամբողջ կարմիր բանակի մասին: Յուրաքանչյուր մարտիկ պետք է իր անձնական վարքով, բնակչութեան հետ ունեցած իր փոխհարաբերութեամբ ցույց տա կարմիր բանակի, ԽՍՀՄ-ի ղինված հենարանի, կապիտալիզմի լծից աշխատավորների ազատարարի հեղափոխական դեմքը: Հարբեցողութեան, չվայրուցեան, մոլուցեան և այլն ամենափոքր արտահայտութեանն անգամ մեծագույն հանցագործութեան է զորամասի ու ամբողջ կարմիր բանակի հանդեպ:

Բնակավայրերով անցնելիս, բնակչութեան շրջանում բնակարաններում տեղավորվելով, բնակելի կամ տնտեսական շենքերում, անհրաժեշտ է հայտարարել յեղրայրական վերաբերմունք դեպի ընտանիքի անդամները և նրանց տնտեսությունը՝ ինչպես կոլեկտիվ, այնպես էլ դեպի մենատնտեսի տնտեսությունը: Կարմիր բանակայինը հեղափոխական բրնակույթյան և կարգի պահպանման որինակ պետք է տա: Կարմիր բանակի զորամասերին ոգնութեան ցույց տալու համար պարհակութեան կատարումն ապահովելով բնակչութեան կողմից, պետք է դրա հետ միասին խուսափել ավելորդ դժվարութեաններ պատճառելուց: Ամեն կերպ պետք է խուսափել ցանքերը փչացնելուց, դաշտերը, սոցարակները և այլն արտերուց, փչացնելուց, այնտեղ, վորտեղ այդ մարտական խնդրի կատարումից առաջ չի գալիս: Մարտիկը, տեղական պարտեզի խնձորները և այլ թակղոված, բիծ է թողնում ամբողջ զորամասի վրա: Յեկս առավել անխույստարելի յե ինքնակամ ոգովել տնտեսական կամ ընտանեկան գործածելի ինչպիսի իրերից էլ ուզում է լինի, ում էլ նրանք պատկանելիս լինեն: Հեղափոխական պատիժ կհասնի յուրաքանչյուր հիմնահարկի (մարադյորին):

Կարմիր բանակի մարտիկը բնակչութեան աչքում պետք է դասակարգային գիտակցականութեան, քաղաքական ակտիվութեան և հեղափոխական կարգապահութեան որինակ հանդիսանա:

ՔԱՂԱՓՈՒՆ ԱՐԽԱՏԱՆԻ ՏԱՆԵԼ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Պատերազմի նպատակների խմանալը, կարմիր բանակի խնդիրների, շահերի ըմբռնումը, վորոնց համար նա պայքարում է, — արանք աշխատավոր մասսաների ջանքերը լարելու կարևորագույն պայմաններ են յերկրի պաշտպանութեանն ապահովելու ու կարմիր բանակին անմիջական ոգնութեան ցույց տալու համար: Ամեն մի բանվորի ու գյուղացու պետք է բացատրել, թե ինչ կապ գոյութեան ունի նրա խնդիրների և շահերի միջև արտադրութեան մեջ, գյուղատնտեսութեան մեջ և կարմիր բանակի պայքարի միջև, ավյալ սայնում կոպող գործասերի մարտական գործողութեան միջև:

Նրա համար անհրաժեշտ է բացատրել նրանց համամիութենական կոմունիստական կուսակցութեան զլխավոր դիժը, խորհրդային իշխանութեան քաղաքականութեանը, ԽՍՀՄ միջազգային դրութեանը: Պետք է կոնկրետ որինակներով անշխատավորների մեջ հավատ ներշնչել կարմիր բանակի ուժի ու տեխնիկայի մասին: Յուրաքանչյուր աշխատավոր պետք է խմանա, թե ով է պատերազմի իսկական մեղավորը, ովքեր են մեր դասակարգային թշնամիները: Աշխատավորները պետք է խմանան մեղ հետպատերազմող յերկրների կառավարութեանների և նրանց սպիտակզվարդիական ու սոցիալ-ֆաշիստական լակեյների հակահեղափոխական քաղաքականութեանը:

Սահմանամերձ ուսյոններում մենք հաճախ կհանդիպենք դանադան սողութեաններին: Այստեղ առանձնապես կարևոր է բացատրել Խորհրդային իշխանութեան ազգային քաղաքականութեանը և պատմել հակառակորդների յերկրներում ազգային ճնշման մասին: Ընդվորում յուրաքանչյուր մարտիկ ինքը պետք է մեր ազգային քաղաքականութեան դասակարգային ըմբռնման որինակ ծառայի: Դասակարգային թշնամին հիփորձի ազգային յերկպառակութեան սերմանել. պետք է մերկացնել նրան և արմատից կտրել այդ փորձերը: Անհրաժեշտ է ուսումնասիրել տեղական բնակչութեան կուլտուրական և կենցաղային առանձնահատկութեաններն ու սովորութեանը: Թնթույրատրելի յե արհամարհանքի կու ծաղրի նշույլն անգամ դեպի նույնիսկ ամենից ավելի նախապաշարումներով հետամնաց աշխատավորները: Այդ պահանջը վերաբերում է նաև հակահերոնական պրոպագանդին: Պետք է պայքար մղել կրոնական թմբաղեղի և տերտերների ազդեցութեան դեմ, բայց այնպես, վորպեսզի «չչմեցնել» առանց ապացույցների և չվերավորել բնակչութեան կրոնական դժգոհումները: Այդ ուղղութեամբ հարկավոր է համբերատար բացատրական աշխատանք: Այդ բանը պահանջում է առանձնապես խմամբոտ, նախնական ինքնապատրաստում և անընդհատ աջակցութեան ղշիջի և պետերի կապի կոպից:

Յուրաքանչյուր մարտիկ պատրաստ պետք է լինի մերկացնելու Թոր-
հրդային իշխանության ու Կարմիր բանակի մասին ստերը, վոր հակա-
ուսկորդներն ազենտները և մեր դասակարգային թշնամիները փորձում
են տարածել: Պետք է ժամանակին բացատրել նրանց կողմից տարվող
ազիտացիայի խարեբայութունը, կանխել նրանց պրովակացիոն լուրե-
րը, վորոնց նպատակն է խուճապ առաջ բերել, թուլացնել աշխատավոր-
ների հավատը դեպի Կարմիր բանակի հզորությունն ու դեպի իրենց ու-
ժերը: Յուրաքանչյուր բանվոր և դյուղացի պետք է պատրաստ լինի
հակահարված տալու դասակարգային թշնամուն, հակաուսկորդի ա-
զենտին, վորոնք փորձում են, մանավանդ պատերազմի սկզբին, մորե-
լիզացիայի մոմենտին, առաջ բերել բոլոր ապրանքները գնելու, փոխա-
ուսկյան ամսերը վաճառելու խուճապային տրամաբուրթյուններ, վոր-
ձում են դժվարություններ ստեղծել ժողովրդական անտեսության մեջ
և այդպիսով ուժեղացնել բնակչության դժվարությունները:

* Դասակարգային թշնամին խորամանկ է: Հակաուսկորդի ազենտները
կղերձեն վարպետներն: Պետք է չմոռանալ, վոր հաճախ դայլը գառան մոր-
թով կլինի: Պետք է կարողանալ բաց անել աշխատավորների առաջ փըս-
փսացողներին, յեկեղեցականներին, դյուղացու «բարեկամի» դիմակի տակ
թաղնվողներին իսկական դեմքը:

Կարևոր է ուսումնասիրել Կարմիր բանակի թշնամիների աշխատան-
քի յեզանակներն ու մեթոդները: Այդ պատճառով, այն ամենը, ինչ խոս-
վում է դասակարգային թշնամու աշխատանքի մասին (ձգած թուղցիկ-
ներ, լսած խոսակցություն և այլն) պետք է ծածկարար դիտել և հայտ-
նել իր քաղցկին, հրամատարին:

Յուրաքանչյուր մարտիկ ՊԲՎ, բանակին կից նրա Հատուկ բաժին-
ների ողնականը պետք է լինի հակաուսկորդի լրտեսներին, վնասարարնե-
րին և մյուս ազենտներին հայտաբերելու գործում: Անհրաժեշտ է այդ
բանի մեջ ներգրավել ամբողջ աշխատավոր բնակչությանը:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ռազմական գաղտնիքի և
հակառակորդի լրտեսության դեմ պայքարի խստագույն պահպանման
անհրաժեշտության մասին բացատրության վրա:

Իր այդ դերի համար Կարմիր բանակի մարտիկը պետք է պատրաստ-
վի ամեն սր դրբերի, հուշագրերի, գրույցների միջոցով, վոր կազմա-
կերպում է բջիջը, անց են կացնում քաղաշխատողներն ու հրամատար-
ները: Նրանց հետ նույնպես հարկավոր է հաճախակի խորհրդակցու-
թյուն ունենալ բնակչության մեջ խնդիրներին, աշխատանքի յեզանակնե-
րի ու մեթոդներին վերաբերյալ: Յեթե չդիտես ինչպես պատասխանե-
րով հարցին, ուղղակի ասա, վոր ինքդ չդիտես, և ցույց տալ թե
ուժ պետք է դիմել բացատրություն ստանալու համար: Սակայն միշտ

անհրաժեշտ է իմանա լայն բողոքն, ինչ քեզ համար անհայտ է ու անհաս-
կանալի՝ քաղաշխատողի, հրամատարի, բջիջի և ազիտ-սայակի միջո-
ցով այնպես, վոր կոփվես հետադայի համար:

ՎԼՍԱՎՈՐՆ ԱՅՆ Ե, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՈԳՆԵԼ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՆ

Ամեն բանակ, վորքան էլ նա տեխնիկայես դինված ու ամեն բանով
հայթայթված լինի, այսպես թե այնպես պատերազմի ժամանակ կարելի
է զգուշ բնակչության կողմից լայն անմիջական աջակցության: Այդ
բանի վրա Կարմիր բանակն ամենից շատ կարող է հույս դնել, քանի վոր
նա սերտորեն կապված է աշխատավորների լայն մասսաների հետ: Բազ-
մապիսի յե այդ աջակցությունը: Թվենք հավանական դեպքերն ու այդ
աջակցության բնույթը:

— Չորքերի հարմար ձևով բնակարաններում տեղավորելիս, հետևա-
բար հանդատանալու մեծ կամ փոքր չափով հնարավորությունը, շատ
դեպքերում կախված է այն բնակչությունից, վորի մեջ տեղավորված
են զորքերը:

— Շատ հաճախ հարկավոր է լինում դիմել բնակչության սայլերի
ողնությանը՝ զորքերն արագ տեղափոխելու համար և դիտավորայես
մթերք և հայթայթման այլ տեսակներ տեղափոխելու համար: Նայած
վորքան արագորեն կհավաքվեն սայլերը և վորքան ճշտապահությամբ
և բարեխղճությամբ կկատարեն սայլապանները տեղական բնակչություն-
նից իրենց պարտականությունները—դրանից շատ անդամ կախված կլի-
նից իրենց պարտականությունները—դրանից շատ անդամ կախված կլի-
նի՝ թե արդյոք ժամանակին կտեղափոխվե՞ն մարդկանց ոճանդակները
և արդյոք ժամանակին կկերակրվե՞ն պատերազմող զորքերը թե վոչ:
Այստեղ բնակչությունն անմիջապես կնպաստի մարտի հաջողությանը:

— Հաճախ զորքերը կարելի է կզգան բնակչության կողմից բանվորա-
կան ուժի ոգնության, վոր հարկավոր կլինի թիկունքում ամբուլթյուն-
ներ կառուցելու համար, իսկ յերբեմն էլ առաջավոր գծում լարափակցու-
նե կառուցելու կամ վոչնչացնելու համար: Վորքան բարեխղճորեն և
արագ կկատարվի այդ աշխատանքը, այնքան ավելի մեր զորքերը խոշոր
հաջողություններ կունենան:

— Չի վերացվի տեղական միջոցներից զորքերի համար պարեն ու
խար պատրաստելու հնարավորությունը, յերբ յերկրի ներսից կրել բե-
րելը վորեն պատճառով կզժվարանա: Այդ բանին ամենից արագ և անար-
դել պետք է ոգնության հասնի ինքն աշխատավոր բնակչությունը:

— Հսկայական է փոստ-հեռագրական դժերի նշանակությունը բա-
նակի համար: Այդ դժերի պահպանումը հակաուսկորդի ազենտներից և
վնասարարներից իրեն, բանակի ուժերով դժվար է գժերի բնարձակու-

թյան շնորհիվ՝ մեծ սարսուռները վրա : Շատ ավելի հեշտ է լուծ-
վում այդ խնդիրն աշխատավոր բնակչութեան մասնակցութեամբ :

— Նույնը և ճանապարհների ու կամուրջների նկատմամբ : Այստեղ
աշխատավորներն իրենք անմիջապես շահագրգռված են նրանց լիակա-
տար անվնասութեան համար : — քանզի կամուրջը, քարուքանդ ճանա-
պարհը խանդարում են անտեսական ու քաղաքական կյանքը :

— Նշանավոր շափով ոգնութեան կարող է ցույց տալ տեղական
բնակչութեանը ոգաբխիական դիտողութեան գործում, Պաշր-Ավիաքի-
մի բլիճների միջոցով, ակտիվիստ բանվորների ու կուսնտեսականների
անձնական մասնակցութեամբ ուղային դիտողութեան պատերում : Այդ
հնարավորութեան կտա լավագույն կերպով կազմակերպել թե՛ գործերի,
թե՛ բնակչութեան հակառակին քիմիական պաշտպանութեանը :

— Քաղաքացիական պատերազմը շատ դեպքեր դիտե, յերբ գործերը
կարիք էլին դրում առաջնորդների (վարպետների) անձանոթ, քիչ անցա-
նելի տեղերի համար : Պերեկոպյան գրոհների ժամանակ 15-րդ կարմիր
գեղիկայի (այժմ Սիվալյան) շուրմային գորսայուններն առաջ էլին
չարժվում կարմիր բանակին դասակարգայնորեն նվիրված տեղական աշ-
խատավորներից վերցրած առաջնորդների սգնութեամբ : Այդ նշանավոր
շափով արագացնում էր գործատեղի առաջընթացը : Ապագա պատե-
րագրում նույնպես գործերը կարիք կղզան առաջնորդների (վարպետների),
վորանք լավ դիտեն ուսյունը, և՛ թարգմանների, վորոնք դիտեն տեղական
յեզուն :

Այնպեզ, վորտեղ աշխատավորների քաղաքական ու ռազմական ակ-
տիվութեանն անհրաժեշտ բարձրութեան վրա յե դրված, տեղական
բնակչութեանը կարող է և պետք է ծառայութեանը մատուցել գոր-
քերին տեղանքի հետախուզութեան ժամանակ և նույնիսկ հակառակոր-
դին հետախուզելիս :

— Այստեղ պետք է հիշատակել վերևում շոչափած ռազմական
գաղտնիքի պահպանման խնդրի մասին, վորովհետև բնակչութեանը հա-
ճախ գործերի մասին տեղեկութեանը մերկացման ամենավտանգավոր
աղբյուրն է հանդիսանում :

— Միսն առանց վտակոր չի լինում : Առանձին դատալիքներ կլինեն
նաև կարմիր բանակում : Բնակչութեանը պետք է ողնի բանակին անխնա
պայքար մղելու դասալիութեան դեմ—հեղափոխութեան դավաճանների,
իր գործատի մատնիչների դեմ : Աշխատավոր բնակչութեանը պետք է
պայքարի դատալիքների դեմ, նրանց հանձնի հեղափոխական իշխանու-
թեան ձեռքը :

Բնակչութեան կողմից այս և այստեղ չքվարկած մյուս ոգնութեան
կազմակերպման ժամանակ անհրաժեշտ է խստորեն պահպանել դատա-
կարգային մոտեցումը : Այն ծանրութեանը, վորոնք ամբողջութեամբ

կամ առավելագույն կարող են ընկնել կուլակութեան վրա, չպետք է վնա-
սեն խորհրդակցութեանը, կուլակութեանը և աշխատավոր
գյուղացի-մենատեսակների շահերին : Այդ վերաբերում է սայլերով ող-
նելուն, մթերումներին և այլն : Ընդհակառակը, թվարկած խնդիրներից
շատերը չեն կարող և չպետք է արվին դասակարգայնորեն անհարգատ
տարրերի վրա : Կտպի գծերը, կամուրջները և այլն հաճախ հարկ է լի-
նում պահպանել հենց կուլակութեանից, ուր մնաց նրան հանձնել նրանց
պահպանութեանը : Խափանման դուրսերը (դոնաները) պետք է խստորեն
թաղցնել հակառակորդից : Այդ պատճառով, վորպես կանոն, չի կարելի
այդ աշխատանքը հանձնել նրանց, ավելի թշնամու կողմն են : Նույնը
վերաբերում է նաև ողա-քիմիական դիտողութեանը : Սակայն այդ բոլոր
դեպքերում աշխատավորների ոգնութեանը պետք է արտահայտվի նրա-
նում, վորպեսզի նրանք մի դեպքում (սայլեր, մթերումներ և այլն) ող-
նեն հայտարարելու անաշխատ տարրերի միջոցները (ռեուրսները) և
ամենից ավելի անվնաս բաշխելու ծանրութեանը աշխատավորների
վրա, և մյուս դեպքում (կտպի, կամուրջների և այլն պահպանութեան)
պետք է ողնեն անվնաս պահպանելու դասակարգային թշնամուն (անվնա-
սութեան համար անաշխատ տարրերի խմբակային կամ անձնական պա-
տասխանատվութեան կազմակերպում, պատանդներ և այլն) : Այս ամբողջ
աշխատանքում պետք է հենվել խորհուրդների, գործարանների, խորհ-
ունտեսութեանների ու կուլակութեանների, կուլակների վրա :

Պատրաստելով աշխատավորներին կարմիր բանակի մաքսիմալ ող-
նութեան ցույց տալու համար, միաժամանակ անհրաժեշտ է կոչ անել
հակադրածելու այդ նույն տեսակետից հակառակորդի գործատեղին :
Այն ամենը, ինչ ողնում է հակառակորդին, հարված է կարմիր բանա-
կին : Անհրաժեշտ է բացատրել աշխատավորներին վոչ միայն այն, թե
ինչպես պետք է ողնել մեզ, այլև այն, թե ինչպես վնասել հակառակոր-
դին : Ինչպես որինակ՝ խաբել հակառակորդի հետախուզութեանը, նրա
հարցերին սխալ պատասխան տալ և այլն :

ՈՐՆԻՐ ՏԵՂԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ

Մենք արդեն իմացանք, թե վորքան շատ հոգսեր կարմիր բանակի
մասին ընկնում են սահմանամերձ շրջանի աշխատավորների վրա : Նրանք
քիչ դժվարութեաններ չեն ունենա կազմած հակառակին և քիմիական
պաշտպանութեան կազմակերպման հետ, կարմիր բանակայինների ընտա-
նիքներին սղելու հետ : Խորհրդային տնտեսութեան և կուլտուրական
չինարարութեան խնդիրները սահմանամերձ շրջանում վոչ միայն չեն
նվազում, այլ բնդհակառակը, ե՛լ ավելի խոշոր նշանակութեան են ստա-
նում հակառակ խնդիրների առնչությամբ : Մինչդեռ քիչ ուժեր չեն դնում

Կարմիր բանակ կուսակցական ու խորհրդային ապարատից, գործարան-ներեց ու Ֆարրիկներից, խորհանտեսութուններից ու կոլտնտեսութուններից: Սրանք բոլորը կարիք կզգան ողնության: Նրանց կողմի թիկունքը: Սակայն Կարմիր բանակի զորամասերը նույնպես կարող են նրանց վորոշ ողնություն ցույց տալ:

Ահա քաղաքացիական պատերազմի բազմաթիվ որինակներից մեկը, վորը ցույց է տալիս թե ինչպես բանակն ողնում է բնակչությանը.

«Ձկար վոչ մի գյուղ, գործարան, ագարակ, ավան, վերտեղ մեր դիվիզիայի կուսակցականները չքողնեյին անհամար կուլտուրական ու քաղաքական նվաճումների հետքեր: Կարմիր բանակայիններն ու հրամատարները կազմակերպեցին հարյուրավոր գյուղական խորհուրդներ, հեղկոմներ, խրնիք-ընթերցարաններ, դպրոցներ և գրադարաններ, քուն ու հանգիստ չունենալով» (Քաղաքացիական պատերազմին մասնակցողի հիշողություններից):

Քաղաքացիական պատերազմի և Հատուկ Արևելյան Կարմրազորչ բանակի պայքարի փորձն արդեն հուշում է, թե ինչպիսին պետք է լինի այդ ողնությունը:

— Ողնություն կազմակերպելու համար բնակչության և տնտեսությունների հակառակյին պաշտպանությունը:

— Իժչկական և անասնաբուժական ողնություն մարդկանց ու տնային կենդանիների համաճարակ (մասսայական) հիվանդությունները դեպքում զորամասերի տեղավորված ուսյունում:

— Տնտեսական ողնություն իշխանության տեղական մարմիններին (խորհուրդներին, գործկոմներին, հեղկոմներին), խորհանտեսություններին ու կոլտնտեսություններին, ցանքի, բերքահավաքի, մթերման և այլ գյուղատնտեսական կամպանիաների ժամանակ: Այս ողնությունը կարող է տարբեր լինել՝ կազմակերպչական, պրոպագանդիստական, բանվորական ուժով, արանսպորտով, գույքի վերանորոգումով և կառուցումներով: Այստեղ առանձնապես շատ բան կարող են անել տեխնիկական զորքերը:

— Տնտեսական ողնություն աշխատավորների ընտանիքներին (ինչպես կոլտնտեսականներին, այնպես և մենատնտեսներին), վորոնք ճակատում են գտնվում:

— Քաղաքական-կուլտուրական ողնություն—լուսաբանել խորհրդային իշխանության և կուսակցության քաղաքականությունը, դասակարգային թշնամու գեմ պայքարի խնդիրները, խմբակների, գրադարանների, կինոյի, ռադիոյի, պատի թերթի կազմակերպումը, թուղցիկներ, պլակատներ, թերթեր և այլն տարածումը:

Պարագան ինքը ցույց կտա տակավին շատ բան, թե ինչով կարելի յե և հարկավոր է ողնել ախտավորներին Կարմիր բանակի միջոցներով:

Ասկայն մի բան պարզ է, վոր այդ ողնությունը վոչ մի դեպքում չպետք է վնաս հասցնի գորամասերի և մարտիկների առանձին խմբերի մարտական պատրաստությանը: Որինակ՝ մարտական պարագայում չի կարելի առանց հատուկ, ծայրահեղ կարիքի աշխատանքից կտրել մարդկանց, ճիերին, ավտոմոբիլը, տրակտորը: Առհասարակ յերբեք չպետք է հուշս դնել գորամասերի այնպիսի ողնության վրա, վոր կարող է յերկար ժամանակով կլանել նրանց ուժերն ու միջոցները, քեկուզ այդ գորամասն օժանդակում էլ լինի: *Չորամասերի համար կանոն պետք է լինի վոչ թե բոլորն անել իրենց ուժերով ու միջոցներով, այլ անձնական որինակով ծավալել տեղական նախաձեռնությունն ու ինքնազործունեյությունը:* Պետք է իրենից հետո թողնել կազմակերպված, քաղաքական «հետք», վորպեսզի Կարմիր բանակի զորամասերի հեռանալուց հետո սկսված աշխատանքը չընդհատվի: Հատկապես այդ պատճառով կարևոր է ողնել ամբողջությամբ տեղական խորհրդային, կուսակցական և հասարակական կազմակերպությունների և աշխատողների հեղինակությունն ու փորձը: Նրանց պետք է փոխանցել պրոլետարական քաղաքների, առաջավոր խորհանտեսությունների ու կոլտնտեսությունների, իրեն Կարմիր բանակի փորձը: Վերևում բոլոր թվածները պետք է կատարել տեղական կազմակերպությունների միջոցով և նրանց անմիջական մասնակցությամբ:

Այդ աշխատանքը բացառապես կամավոր է, բայց առավել ևս կարևոր է հաջողության համար, վորպեսզի յուրաքանչյուր մարտիկ ըմբռնի այդ աշխատանքի նշանակությունը: Մարտիկ-ակտիվիստը պետք է ողնի, վոր իր ընկերն այդ գլխակցի:

ՓՈԽՂԱՎԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՎԱՐԱԿՈՐԴՅՑ ՍԱԲՐԱՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԵՏ

«Կարմիր բանակը ժողովուրդների յեղբայրության բանակն է, ննշված ժողովուրդների ազատագրման բանակ է... Նա հեղափայտության բանակ է, բոլոր յերկրների բանվորների բանակն է» (Ստալին):

Մեր դեմ պատերազմի մեղավորները կլինեն վոչ քե մեզ հետ պատերազմող յերկրների աշխատավորները, այլ այդ յերկրներում տիրող կապիտալիստների ու կալվածատերերի դասակարգը, նրանց իմպերիալիստական կառավարությունը: Այդ յերկրներում ապրում են մեր դասակարգային յեղբայրները—բանվորներն ու գյուղացիները: Սոցիալիզմի պաշտպանության համար կարմիր բանակի մղած պայքարը պայքար է նույնպես մեզ հետ պատերազմող յերկրների աշխատավորների ազատագրման համար: Մեր հաղթանակը այդ յերկրների աշխատավորների հաղթանակը կլինի:

Քաղաքացիական պատերազմի շրջանում Կարմիր բանակի շարքերում պրոլետարական դիկտատուրայի համար արյուն թափեցին նաև լեհական, գերմանական, չեխո-սլովակական, չինական և մյուս բանվորներն ու գյուղացիները, վորոնց թիվը քիչ չէր:

Հատուկ Կարմիր շարքերում հետազոտողները—Արևելյան բանակի մարտիկները վոլգերում էլին, յերբ իրենց մոտ էլին գալիս ինտերնացիոնալ պատգամավորութուններ—Արևմուտքի ու Արևելքի տասնավոր յերկրների բանվորներն ու գյուղացիներն ներկայացուցիչները:

Սոսնուրդներն յերկիրը պաշտպանել—նշանակում է նախ և առաջ ջանքատեղ թշնամու կենդանի ուժը, քանդել նրա պատերազմ վարելու քաղաքական ու տնտեսական աղբյուրները: Իսկ այդ նշանակում է, վոր Կարմիր բանակը չպետք է ընդհարման սպասի անպայման մեր տերիտորիայի վրա: Նա կձգտի կանխել հակառակորդի հարվածները: Նրան կործանիչ հարվածներ հասցնելով, անհրաժեշտ կլինի փնտռել ամենից ավելի խոցելի տեղերը, շոշափելով թիկունքներն ու ոտանդակները: Դրա համար հարկ է լինում հետապնդելու հակառակորդին դեպի նրա յերկիր խորքը, հակառակորդին հասցրած առանձին հարվածները լիակատար քայքայման վերածելու համար: Այդպիսով Կարմիր բանակի զորամասերը սերտ շփման մեջ կմտնեն հակառակորդի զորքերից ազատված տերիտորիայի աշխատավորների հետ:

Այնպեղի աշխատավորների ամբողջ կյանքը մինչև Կարմիր բանակի գալը խիտ հակադիր է յեղել ՍՍՀՄ աշխատավորների կյանքի համեմատությամբ: Պրոլետարական իշխանության մարմինները կամ տակավին չեն կազմակերպված, կամ դեռևս միայն կազմակերպվում են աշխատավորների ձեռքով: Յեթե ՍՍՀՄ բանվորներն ու գյուղացիները լավ գիտեն իրենց իշխանությունը, իրենց Կարմիր բանակին, մինչդեռ հակառակորդների յերկրների աշխատավորները մեր մասին գիտեն միայն այն, ինչ նրանց է հասնում բուրժուական ստի ու զրպարտությունների ցանկապատի միջով: Թշնամու կառավարությունն ու նրա բանակի հրամատարությունը կոռնա փրփուրը բերանին «կարմիր զորքերի գազանությունների մասին», «ավազակ ու թալանչի կարմիր բանակայինների մասին» և այլն: Նրանք կանգ չեն առնի թալանի ու սպանությունների սուռ, նույնիսկ յերկրաներին, վորպեսզի իրենց աշխատավորներին ցույց տան այդ վորպես «կարմիրների» կատարած դործողություններ: Այսպես՝ Չին-Արևելյան յերկաթգծի միջադեպի ժամանակ ուս սպիտակ-գվարդիականները, համաձայնության գալով սպիտակ-չինական հրամատարության հետ հագել էին «կարմիր սրարտիզանները» շորեր, հարձակվել Տրյոխրեչչե ոսյոնի գյուղերի վրա և կոտորել ամբողջ բնակչությանը: Հետո նրանք նկարագրել ու զոհացրել էին այդ վորպես «կարմիր զորքերի սարսափներ»:

Արևմուտքի մեղ սահմանակից համարյա բոլոր բուրժուական պետություններն աշխատավորներին և մանավանդ ազգային փոքրամասնություններին հեշտությամբ հնազանդեցնելու համար սահմանամերձ շերտի հողի հիմնական մասը հանձնել են կուլակ սպայությանն ու զինվորներին, վորոնք իրենց ցույց են տվել վորպես հուսալի Փաշիստներ: Այդ զինվորական զաղթականները, իրենց սպաների գլխավորությամբ, կոմիսիադ Փաշիստական կազմակերպություններ են և արդեն խաղաղ ժամանակ պատրաստվում են յրտեսության ու փնասարարական աշխատանքին ադազա պատերազմի համար: Դրա հետ միասին այդ սահմանամերձ շերտից կվերցվեն ու բանտերը կնետվեն բոլոր առաջավոր բանվորներն ու գյուղացիները:

Այստեղ առանձնապես կարևոր է բացատրել մեր քաղաքականությունը, պատմել ու սպացուցել արիմակներով, վոր Կ. բանակը բարձր դիտակցական, կուլտուրական, հեղափոխական բանակ է, մերկացնել հակառակորդների ամբողջ կեղծիքը: Սակայն դրա հետ միասին, այստեղ պետք է առանձնապես արթուն լինել, ինչպես դասակարգային, նույնպես և ռազմական տեսակետից:

Ամբողջ բացատրական աշխատանքում պետք է համբերատար լինել այն, ինչ կես խոսքով պարզ է խորհրդային գյուղացու համար, նույնը, այստեղ կպահանջի առանձին մանրամասն բացատրություն: Մեր կուլտեստությունների մասին նրանցից շատ քչերին հայտնի կլինի: Մեր կարգերը նրանցից շատերի համար առաջին անգամ կարող են անհասկանալի մնալ: Ծատ ավելի ցածր կլինեն նրանց քաղաքական մակարդակը, դասակարգային դիտակցությունը, կազմակերպվածության հմտությունները և հասարակական ակտիվությունը: Ահա թե ինչու այստեղ մեղանից պահանջվում է առանձնապես ուշադրություն դեպի աշխատավոր բնակչությունը, պահանջվում է համբերատար բացատրական աշխատանք և սեփական որինակելի վարք ու բարք: Կրկին ու կրկին պետք է ընդգծել, վոր ամեն մի մարտիկի, դասակարգայնորեն կոմիսիադությունն ու կուլտուրական վարքը հակառակորդից ազատագրված յերկրամասերի բնակչության հետ փոխհարաբերությունների բանալին է:

Այդ միանգամայն հաստատում է Հեո. Արև. Կարմիր զորք բանակի փորձը: Մի ոպերացիայի ժամանակ մեր զորամասերը, հետապնդելով խուճուպի մատնված սպիտակ-չինացիներին և սպիտակ-գվարդիականներին, ականատես յեղան համարյա դատարկված գյուղերի: Աշխատավորներն ահաբեկվել էին «կարմիրների գազանություններից» և փախուստի դիմել: Սակայն մյուս ոպերացիայի ժամանակ, նույն տեղում, բնակիչները մասսաներով դիմավորելու դուրս յեկան մեր զորամասերին, չհայտաբերելով վոչ մի վախ:

Մի ուրիշ ուայոնում, վորտեղ մեր զորամասերը լիկվիդացիայի էյին յինխարկել սպիտակ-դվարդիականների ու սպիտակ-չինացիների վոս-նձգությունները, զինվորներն ու տեղական բնակիչները հորինել ու յեր-գում էյին այսպիսի մի յերգ՝

—«Կարմիրը լավ է—վոչ վոքի ձեռք չի տալիս, կարմիրը չի-
նական գինվորից լավ է»:

Յերբ Տրյոխբեչյեի ուայոնում սպիտակ-դվարդիականները վորձում էյին կրկնել թալանն ու սպանությունները «կարմիրների անունից», բնակիչները վոչ միայն չհավատացին, վոր այդ արեւ են կարմիր զորքե-րը, այլ հատկապես զնացին կարմիր բանակի զորամասերի մոտ՝ պաշտ-պանություն գտնելու և նյութական ոգնություն ստանալու համար:

Ինչոյ էր ձեռք բերված Կարմիր բանակի նկատմամբ այդպիսի վե-րաբերմունքը չինական տերիտորիայի բնակչության կողմից, չնայած՝ սպիտակ-չինացիների ու սպիտակ-դվարդիականների կողմից տարած-ված բոլոր ստերին:

Նախ և առջ կարմիր բանակային մասերի ու մարտիկների դասա-կարգայնորեն կոմվածությամբ և ինտերնացիոնալ-գիտակցական վար-քով: Այդ մասին են վկայում մեր զորքերի մասին յեղած բաղմաթիվ փաստաթղթերն ու կարծիքները:

Ամենից ավելի գնահատելի յե չին բանվորների խոստովանությու-նը.

«—Մենք, Ջալայնորի հանգիների բանվորներս, մեր յերախ-տագիտությունն ենք հայտնում Կարմիր բանակի գորամասերին, նրանց դեպի մեզ ցույց տված լավ, հոգատար վերաբերմունքի հա-մար: Կարմիր բանակի գորամասերի Ջալայնորում գտնված ամ-բողջ ժամանակ հիմնահարության կամ դեպի մեզ, կարմիր բանա-կայիներին կողմից կոպիտ վերաբերմունքի վոչ մի դեպք չի յե-ղել: Ի նշան մեր յերախտագիտության և շնորհակալության նվի-րաբերում ենք ձեզ գրոշ:

Ստրիկոնն ճնչված, սիստեմատիկ քաղցի մատնված չին չբավորու-թյունն արտահայտվեց դեպի Կարմիր բանակն ունեցած իր վերաբեր-մունքը մի ձերուհու այսպիսի խոսքերով.

«Կարմիր բանակն աստծուց ավելի լավ է. աստված հոց չի տալիս, կարմիր բանակն ուտելու բան է տալիս»...

Այդ նրա համար, վոր հրամատարությունը պարենավորման ոգնու-թյուն էր կազմակերպում չբավորությանը, վորը հյուսվել էր քաղցից մինչև մեր գալը:

ԳԵՐԻՆԵՐԻ ՆՎԱՏՈՒՄԻ ՑՈՒՅՑ ՏԱԼ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ - ԳԱ-ՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԲ

Կարմիր բանակայինը պետք է հաստատ իմանա, թե ինչպես պետք է վերաբերվի դեպի դերին:

Ինչո՞վ է բացատրվում դեպի դերի զինվորը յեղած ասեղությունը, բուրժուական բանակներում: Հանձնե՞ս դերի աշխատավորի բուրժուա-դիան տեսնում և վոչ միայն թշնամական բանակի ներկայացուցչին, այլև իրեն թշնամի դասակարգի՝ բանվորի կամ գյուղացու ներկայացուցչին: Յե՞վ միևնույն ժամանակ, սպայի գերության մեջ, նրան վորպես սպայի լիովին ուժեղը տալու հետ միասին, նրան վերապահվում էր մի շարք հարմարություններ, մինչև իսկ սպայակից (դենշչիկից) ոգտվելու իրա-վունք. այնինչ դերի զինվորները բոլոր յերկրներում պահվում էյին ան-տանելի, ամբողջի պայմաններում:

Համաշխարհային պատերազմի ժամանակ զինվորի համար գերու-թյան սարսափներն այնքան մեծ էյին, վոր հաճախ տեղի էյին ունենում ինքնասպանություններ: Գերի զինվորներին ողտադորձում էյին ամե-նադժնդակ, ամենասոսկալի աշխատանքներում: Ամենաչնչին անհնազան-դության համար ճամբարային պետին, դերիները գանակոծվում էյին:

Ահա այդ իրականության պատկերը.

...«Գերիներին ներս հրեցին մարազը: Նրանց ձեռքերի թաթերը կապկպած պարանի ծայրերին անցկացրին առաստաղի հեծանների վրա-յով և յերկու ձեռքերը ջղաձգվելով սոսկալի ցավից, կախվեցին ողում: Յավն այնքան ուժեղ էր, վոր Մենտելեն մի քանի որից հետո կորց-րեց գիտակցությունը:

Ուշքի դարձ, նա տեսավ իր գլխին կանգնած ավստրիացի զինվորին: Գավրիլովի վրա նույնպես սուշաթափ պառկած մարազի հատակին: Գուտար մինչև մարմինը թաց էր: Նրա կոքին ջուր էյին լցնում և՛ Գավրիլովի վրա, նույնպես սուշաթափ պառկած մարազի հատակին:

Յերկու ժամ տանջեցին դերիներին, վորոնք կորցնում էյին իրենց գիտակցությունը յուրաքանչյուրը մի քանի րոպե, բարձրացնելով նրանց դեպի վեր և բաց թողնում միայն նրա համար, վորպեսզի ուշքի գան: Վերջապես նրանց պատգարակների վրա գիտակցությունը կորցրած տա-րան նորից կամերան»... (ցարական բանակի զինվորի հիշողություննե-րեց):

Գերիներին սնունդը չէր ապահովում նույնիսկ նրանց կիսաքաղց դո-յությունը: Ամեն տեսակ լյղղանքներից ոգտվելը սովորական յերեվություն էր: Ահա մի որինակ.

...«Մի անգամ մենք տեսանք ճամբարային խոհանոցի առաջ մի քանի մարդկանց, վորոնք կանգնած էյին աղբի խրամի (կա-

նալի) մտա, վորաեղից հոսում եր խոհանոցի կեղտաշուրը, և իրենց կաթսայիկները մեջ եյին հավաքում ամեն տեսակ լղղանք: Նրանց մեջ կային ուռններ, ուռմխներ և սնրեր:

— Ի՞նչ եք անում, յեղբայրներ, սկսեց հանդիմանալ զըստբախտներին Ալիմիչը, չէ՞—վոր այդ աղբն ուտել չի կարելի...

— Ե՛յ դու հաստամուկ, ի՞նչ ես մարդկանց զրգուում.— բղավեց Գավրիլովը լուսամուտի մոտ կանգնած կարմրերեսին, գինվորի փաթաթանի նման կեղտոտ թասակը գլխին քրտնած խոհարարին:

— Ի՞նչ զործն և.— անամոթարար ժպտալով պատասխանեց խոհարարը,— թող հավաքեն, չէ՞ վոր այդ մենք խողբերի համար ենք թափում... (նույն տեղում):

Գերինների բարակներում իրար վրա թափված լինելը, ցուրտն ու մեղան այն տեղն եյին հասցնում, վոր հիվանդանում եյին գերինները հարյուր հազարներով տիֆերով, հիվանդանում եյին թոքախտով, տասնյակ/հազարները մեռնում եյին քաղցից ու այլ հիվանդություններից:

Սորհրդային—լեհական պատերազմում գերի ընկած ընկերներից մեկը գրում է.

«Ճամբարում թաղավորում եյին սովը, հյուժող աշխատանքները, անգութ խտուրթյունը, վոր ուղղակի հաճախ մեր գերիներին սպանում եյին հարբած սպայության զվարճության համար:

Իսկ այժմ այդ յերևույթներին ողնության յեկան ուժեղ դաշնակիցներ՝ փորհարները, տիֆը, քուրթը, խոլերան: Հիվանդները հարյուրներով մեռնում եյին ճամբարում, վորպես թե մինչև հիվանդությունը հայտարարելը, և տասնյակներով—հիվանդանոցում: Յես շեմ կարող ճիշտ թիվն ասել, թե քանի հզուի եյին լեհական գերության մեջ, բայց չեմ սխալվի յեթե ասեմ, վոր ամեն մի հողուն, վոր Սորհրդային Ռուսաստան եր վերադառնում, ընկնում եր յերկու հողի թաղված՝ Լեհաստանում»:

Հարկ կա՞ հիշատակելու այն մասին, վոր սողազա դասակարգային հակառակարեքում յուրաքանչյուր գերու հետ իմպերիալիստները հիվերաբերվին վորպես իրենց ուղղակի դասակարգային թշնամու հետ և ծաղրի կենթարկեն այնպես, ինչպես այդ բանին ընդունակ և մեռնող դասակարգը:

Շատ ժամանակ չե, ինչ մեր աչքի առաջ հաստատվեց այդ ՀԿՀՍ բանակի փորձով: Գիշերը № գնդի դասհրամ ընկ. Չապարինը վիրավորվելով, գերի ընկավ սպիտակ-չինացիների ձեռքը: Նրան դտան դադարար հոշոտման յենթարկված. կտրտել եյին նրա փորը, աչքերը հանել

և աչքերի տեղ փամփուշտներ հագցրել: Սակայն դրանով սպիտակ-բան-գիտկները չեյին բավականացել. նրանք ալլանդակել եյին նրա սեռական սրգանը:

Բոլորովին այդպես չե և այդպես չպետք է լինի վերաբերմունքը դեպի գերին կարմիր բանակի մարտիկի կողմից:

Մենք անխնա յեմք դեպի քշնամին քանի նա զինաքափ չի յեղած: Գերի վերցնելուց հետո միանգամայն այլ է վերաբերմունքը: Ընդ-վարում պետք է խիստ տարբերություն դնել գերի սպայի և զինվորի միջև: Սպան մեր ուղղակի դասակարգային քշնամին է: Նրան պետք է մեկուսացնել, այնպիսի պայմանների մեջ դնել, վորպեսզի նա չկարողանա մեզ վնասել: Սակայն նրա հետ նույնպես անհրաժեշտ է զսպված, քաղաքավարի վերաբերմունք:

Իսկ աշխատավորներից գորակոչված գերի զինվորը մեր դասակարգային յեղբայրն է: Վորպես կանոն, նա կամ հարկադրված է մեզ հետ պասեքազմում, կամ խաբված է բուրժուական կառավարութայուններից և նրանց պնակալեզներ—գանազան տեսակի սոցիալ-ֆաշիստներից:

Այսպիսի գերինների նկատմամբ յեղայրական վերաբերմունք պետք է լինի: Պետք է կարողանալ դասակարգային ճշմարտության խոսքով ողնել մեկին, վոր նա գիտակցի իր սխալը, մյուսին, վոր նա հասկանա այն ամբողջ ճշունքը, վոր հասցնում է կապիտալիզմն աշխատավորներին, վորպեսզի նրանք բուրք սովորեն, քե ինչպես պետք է պայքարել բուրժուական-իրավակարգը տապալելու համար, հակահեղափոխական իմպերիալիստական պատերազմը, վոր նրանց կառավարութայուն կողմից մղվում է մեր դեմ, քաղաքացիական պատերազմի վերածելու համար, հանուն խորհուրդների իշխանութայնի:

Այս խնդիրն իհարկե, միանգամից չի լուծվում: Գերին մարտի ժամանակ և մարտից հետո այնքան է վախեցած, վոր ամենից առաջ նրան դղալ պետք է տալ, վոր նա անվտանգ դրության մեջ է: Գրա հետ միասին այդ մոմենտին մենք գեռես չդիտենք, թե ով է նա: Չէ՞ վոր գերու և փախտակի անվան տակ, նույնիսկ բանվորի կամ գյուղացու անվան տակ, կամ նույնիսկ կոմունիստի անվան տակ մեզ մոտ կարող են գալ Փաշիստներ և յրտեսներ հակառակորդից: Այդ պատճառով անհրաժեշտ է խիստ դասակարգային-մարտական զգոնություն և զգուշություն: Ընդվորում պետք է հիշել, վոր առաջին խնդիրը պետք է լինի գերուց տեղեկություններ ստանալ հակառակորդի մասին, և դրա համար նրան տատկով պետք է հանձնել հրամատարին, օւղարկել շտաբը: Յեվ հատկապես դրա համար առանձնապես կարևոր է, վոր հենց առաջին տպավորությունները նրա հետ վերաբերմունքից բաց անեն նրա աչքերը, վոր նա, յեթե աշխատավոր է, և վոչ թե Փաշիստ, մեզ ընդունի վորպես դասակարգային բարեկամներ:

Այդ տեսակետից հաջողութուններից կախված կլինի և այն, վոր նա իր գերութեան մասին և մեր գեալի զինվորներն ունեցած վերաբերմունքն մասին տուն նամակ կգրի: Մեզ մոտ գերիները գրութեան մասին վորքան շուտ և լիովին խմանան հակառակորդի բանակում, այնքան շատ վերացված կլինի կեղծիքը Կարմիր բանակի մասին, վոր կտարածեն մեր թշնամիները: Չին զինվորները մեծ բավականութեամբ Ելին նամակ գրում տուն. վոմանք հորը, մորը, մյուսները—յեղբայրներին և քայրերին: այդ նամակներում նրանք մերկացնում Ելին կեղծիքը Կարմիր բանակի մասին:

Վիրավորված Լյու-Տին-Սինը գրում է իր յեղբայրներին.

Լեմ-Սիյ և Տին-Սա յեղբայրներ, յես վիրավորված եմ ձախ քեզից, այժմ հիվանդանոցումն եմ, շուտով կառողջանամ: Ռուսական բանակը, սպաներն ու զինվորները յեղբայրաբար են վերաբերվում մեզ—ավելի լավ, քան մերոնք, չին սպաները»:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ԲՆՈՒՅԹԸ

Կարմիր բանակն իր շարքերում համախմբում է բոլոր ազգութունների աշխատավորներին, վորոնք բնակվում են խորհրդային Միութեան մեջ: Կարմիր բանակը պաշտպանում է աշխատավորների շահերն անկախ նրանից, թե ինչ ազգութեան են նրանք պատկանում:

Կարմիր բանակը խՍՀՄ բոլոր ազգութունների աշխատավորների գինված հենարանն է, վորոնք համախմբված են պրոլետարիատի դեկտատուրայի, սոցիալիզմի համար միատեղ պայքար մղելու:

Ընկ. Ստալինը մեր բանակն անվանեց՝

«Ժողովուրդների յեղբայրության բանակ, ոնշված ժողովուրդների ազատագրման բանակ, մեր յերկրի ազատությունն ու անկախությունը պաշտպանող բանակ»:

Կարմիր բանակի շարքերում կան 100-ից ավելի ազգութուններ, և կարմիր բանակայիններն այդ ամբողջ մասսան հանդիսանում է վորպես միաբան զոգված ինտերնացիոնալ մի ընտանիք:

ԽՍՀՄ գինված ուժերի շինարարութեան մեջ իր արտացոլումն է գտնում կուսակցութեան և խորհրդային իշխանութեան ազգային քաղաքականութունը: Բոլոր ազգութունների աշխատավորներին հնարավորութուն տալու համար, վորպեսզի նրանք լիովին պատրաստվեն խՍՀՄ սահմանների պաշտպանութեանը, ավելի լավ ուսումնասիրելու ուսուցանական գործը, բարձրացնելու իրենց քաղաքական դատարարականութունը—Կարմիր բանակում կազմակերպված են հատուկ ազգային դրամասեր և ստորաբաժանումներ: Այդ զորամասերում ու ստորաբաժանումներում բոլոր պարագմունքները տարվում են մայ-

րենի լեզվով: Կան ուկրաինական, բելոուսական, թաթարական, վրացական, հայկական, ուղբեկական, բուրխատական, լեհական, տաջիկական, թուրքմենական, գերմանական և այլ կարմիր բանակի զորամասեր ու ստորաբաժանումներ: Այդ զորամասերը տարեցտարի զարգանում ու ամրանում են ամբողջ Կարմիր բանակի հետ միասին, համապատասխան ազգութունների տնտեսական ու կուլտուրական աճման հետ միասին—խորհուրդների յերկրի ընդհանուր սոցիալիստական աճման հիման վրա:

Կարմիր բանակը համայն աշխարհի աշխատավորների շահերի պաշտպան է կանգնած. նա հանդիսանում է համաշխարհային պրոլետարական հեղափոխության առաջավոր ջոկատը, խՍՀՄ—համաշխարհային պրոլետարիատի հայրենիքի—հավատարիմ պահապանը: Ամբացնելով պրոլետարական պետութեան մարտական հորութունն ու պաշտպանունակութունը, Կարմիր բանակն ուժեղացնում է նաև միջազգային պրոլետարիատին՝ իր ազատագրման համար մղած պայքարում, սոցիալիզմի համար պայքարում: Կարմիր բանակն ազատութուն է բերում բոլոր յերկրների աշխատավորներին և կապիտալիստներին, կալվածատերերին, կուլակներին տիրապետութեան տակ ճնշված ժողովուրդներին:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ՅԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՇԽԱՐԿԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԸ

Համաշխարհային պրոլետարիատն ու համայն աշխարհի աշխատավորները Կարմիր բանակն ընդունում են վորպես իրենց դասակարգային շահերի պաշտպան և վորպես մարտնչող համաշխարհային պրոլետարական հեղափոխութեան համար:

Սմենքին հայտնի յե, թե ինչպիսի մեծ ողնութուն ցույց տվին մեզ կապիտալիստական յերկրների բանվորները քաղաքացիական պատերազմի ժամանակ: Այժմ բանվոր դասակարգն իր ակտիվ մասնակցութեամբ հեղափոխական շարժմանը և խՍՀՄ պաշտպանութեան համար մղվող պայքարին, խանդարում է բուրժուազիայի հակախորհրդային ռազմական պլանները:

«Չին զինվորները գերությունից վերադառնալով, Չին-Ար. յերկաթգծի միջադեպը վերջանալուց հետո, ասում էլին. «խորհրդային յերկրում մենք տեսնեմք իսկական յեղբայրական վերաբերմունք դեպի մեզ: Նրանք, վորոնց վրա մենք կրակում էլինք, վոչ քե քշնամիներ են մեզ, այլ մեր բարեկամները: Նրանք դեն շարտեցին կեղծիքի քողը, վոր ծածկում էր մեր աչքերը»:

«Յերկու վերքից եմ յես տանջվում,—ասում էր չինացի վիրավոր զինվորը, մի վերքը, վոր գնդակից է, առողջանում է: Մյուս վերքը, վոր կարմիր զինվորի հզոր խուսից է, յերբեք չի

առողջանա: Յես լսում եյի քշնամի-սպային, յես սպասում եյ
իմ յեղբորը՝ կարմիր գինվորին: Սիրտս ցավում ե գրանից»:

Կարմիր բանակը համաշխարհային պրոլետարիատի բանակն է, ին-
տերնացիոնալ-դասակարգային բանակ է: Դրանից ել բղխում են նրա ին-
տերնացիոնալ, հեղափոխական խնդիրները. այն է՝ պաշտպանել հա-
մաշխարհային պրոլետարիատի առաջին հայրենիքը իմպերիալիստակա
ինտերվենցիայից, պայքարել միջազգային պրոլետարական հեղափոխո-
թյան համար հակահեղափոխական բուրժուազիայի դեմ:



Սրբագրիչներ՝ Հ. Սառիկյան և Ա. Նուզուրյան

Պ Ե Տ Հ Ր Ա Տ Ի Տ Պ Ա Ր Ա Ն

Գլավեր № 7500 (բ). Հրատ. № 2221. Պատկեր № 1735 Տերտ

Հանձնված և արտադրության 15/VI 1932 թ. Սա. Ֆ. Ա.
Ստորագրված և տպելու 5/VI 1932 թ.

543

C 32-1
UA 348

1
2

8007

« Ազգային գրադարան »



42.352